

# ՓԱԻՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԶԵՌԱԳՐԵՐԸ

ԳԻՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Ոսկեդարեան հայկական մատենագրութեան թանկարժէք միա-  
ւորներէից մէկի՝ ձեռագրական աւանդոյթով «Բուզանդական պատ-  
մութիւնք», իսկ գիտութեան մէջ «Փաւստոս Բուզանդի Պատմու-  
թիւն Հայոց» անուններով յայտնի երկասիրութեանը վերաբերող  
պատմագիտական, աղբիւրագիտական եւ ընդհանրապէս բանասի-  
րական հարցերի շուրջ յատկապէս ԺԹ.-ի դարերի սահմանագ-  
ծում ծաւալուել էր հիմնականում առողջ մի քննարկում, որի ար-  
ծարձած հարցերի շրջանակը տասնամեակներ անց ձեւակերպուեց  
բնագրի՝ ակադեմիկոս Ստեփանոս Մալխասեանցի պատրաստած  
աշխարհաբար տարբերակի առաջաբանի ենթավերնագրերի այս  
չարքում. «Դպրութիւնների հարցը - կարծիքներ Պատմութեան  
ծաւալի, լեզուի, գրութեան ժամանակի եւ հեղինակի ազդութեան  
մասին - Ա. եւ Բ. դպրութիւնները եղե՞լ են թէ՞ ոչ - Փաստար-  
կումներ յօգուտ հեղինակի յոյն լինելուն եւ նրանց քննութիւնը -  
Փաստարկումներ յօգուտ հեղինակի հայ լինելուն - Հեղինակը ժա-  
մանակակից չէ - Ակնարկութիւններ Ե. դարի անցքերի վրայ -  
Ժամանակագրութիւն չունի - Պատմութեան հայ գրաւոր աղբիւր-  
ները.- Գրութեան ժամանակը - Հեղինակի հայասիրութիւնը.- Լե-  
զուն, ոճը - Ո՞վ է հեղինակը - Փաւստոս Բուզանդ անունը - Բու-  
զանդարանի հուժիւնը - Զրոյցների գլխաւոր տարրերը - Հոգե-  
ւոր վէպ. նորենացի եւ Փաւստոս»:

Նիւթի, փաստերի եւ աղբիւրների պակասի պատճառով մեր  
(եւ ոչ միայն մեր) պատմութեան ու բանասիրութեան յատկապէս  
հին շրջանին վերաբերող շատ կարեւոր հարցեր դեռեւս երկար  
ժամանակ մնալու են գիտական վարկածների, լիովին տրամաբա-  
նական եւ միմեանց նկատմամբ տրամագծօրէն հակառակ ենթադ-  
րութիւնների առկայութեան մակարդակի վրայ: Ուստի եւ այս  
տեսակ հարցերը յաճախ յանգում են գիտական-հասարակական  
պայմանաւորուածութեան, որ Փաւստոսի երկի դէպքում, հակառակ  
ենթադրութիւնները լիովին մերժելի դարձնել չկարողանալով  
հանդերձ, Մալխասեանցի լիշատակուած առաջաբանի մէջ յանդեց

հետեւեալին. Փաւստոսը հայ էր, իսկ նրա երկը հայերէնով գրուել է Ե. դարի երկրորդ կէսին: Սա եղածների մէջ ամէնատրամաբանականն է, ուստի եւ, քանի դեռ նոր փաստեր չկան, այս տեսակէտը պէտք է ընդունելի համարուի: Սակայն սա էլ չի կարող նշանակել, թէ փաւստոսագիտութիւնն անելիք չունի եւ պէտք է կանգ առնի. հակառակը՝ բաւական շատ անելիք կայ, եւ սրա մէջ առաջնային կարեւորութիւն ունի աղբիւրիս ձեռագրական նիւթի քննութիւնն ու հրատարակումը, որ ժամանակին սկսել էր անուանի բանասէր Գալուստ Տէր Մկրտչեանը (Միաբան). նա 1902ին գրել եւ 1904ին տպագրել է խորագրով իսկ մերինին շատ նման մի յօդուած, որ ինքը համարում էր Բուզանդարանի գիտական բնագրի պատրաստման<sup>2</sup> ճանապարհի մի քայլ. սակայն կարճ ժամանակ անց սկսուեց իր վայրիվերումներով եւ ցնցումներով յայտնի առաջին համաշխարհային պատերազմը, որի եւ իր նմանակ երկրորդի միջակայ քսանամեակի ընթացքում հայ բանասիրութիւնը Հայաստանում կամ սփիւռքում Փաւստոսի բնագիր կազմել չէր կարող: Միաբանի յօդուածի օրերից անցել է շուրջ մէկ դար. այսօր հայագիտութիւնն աւելի կազմակերպուած է (օրինակ՝ այժմ ունենք բազմաթիւ նոր եւ կատարեալ ձեռագրացուցակներ, որոնք աղբիւրիս ձեռագրի օրինակների հարցն աւելի յստակ են պատկերում), սակայն ծրագրուած բաղձալի գիտական հրատարակութիւնը դեռեւս չկայ:

Այս էր կացութիւնը, երբ «Հայաստան» հրատարակչութիւնը 1991ին ծրագրեց «Հայոց մատենագիրներ» անունով մի մատենաշար, որի պատրաստմանը լծուած բանասէրների խորհուրդը նոյն տարուայ ամրանը վճուեց շարքին տալ գիտական-ժողովրդական բնութ. այսինքն՝ աղբիւրները պէտք է ներկայացուէին գրաբար բնագրով եւ գուգագիր աշխարհաբար տարբերակներով՝ ի պահանջել հարկի թէ՛ բնագրերը եւ թէ՛ թարգմանութիւնները ենթարկելով վերամշակումների ու ճշգրտումների: Նոյն խորհրդի վճիռով յանձն առանք Բուզանդի հատորի պատրաստութիւնը. պէտք էր վերջին՝ Վենետիկի 1933ի հրատարակութիւնը համեմատել երկու հին<sup>3</sup> ձեռագրի հետ, արձանագրել բանասիրական գրականութեան մէջ առկայ Բուզանդի բնագրի սրբագրութեան բոլոր առաջարկները, ըստ այս ամէնի՝ անել բնագրի անհրաժեշտ շտկումները, վերջիններիս համաձայն էլ խմբագրել Մալխասեանցի արեւելահայերէն աշխարհաբարը:

Մինչ կը համեմատէինք երկու ձեռագիրը (չարքիս՝ Ա, Բ) եւ կ'արձանագրէինք բանասիրական սրբագրութիւնների առաջարկները, հրատարակչութիւնը հիմնովին փոխեց գործի ծրագիրը՝

հրաժարուեց գրաբար բնագրերից եւ որոշեց բաւարարուել գոյութիւն ունեցող աշխարհաբարները վերատպելով (Բուզանդի դէպքում՝ հինգերորդ անգամ): Քանի որ արդէն արուած աշխատանքը հաստատել էր բնագրի բազմաթիւ խաթարումների շրտկման, ըստ այդմ՝ նաեւ անհարթ ոճի աշխարհաբարը հիմնովին վերանայելու անհրաժեշտութիւնը, հրաժարուեցինք միայն վերջինի խմբագրման՝ ոչ-գրաւոր ստանձնած պարտաւորութիւնից՝, աւելի ճիշդ՝ նախապէս վճռուածը կիսատ-պռատ անելուց կամ աշխարհաբարի սոսկական վերատպման սրբագրչական պատասխանատուն լինելուց:

Որոշ ժամանակ անց, բնականաբար, համոզուեցինք, որ երկու՝ թէկուզ հնագոյն, ձեռագրի համեմատութիւնը վստահ վճիռներ կայացնելու համար անբաւարար է, ուստի համեմատեցինք նախ Երեւանի մնացեալ ձեռագրերը, ապա՝ Վիեննայի մէկը (պատճէնն ունէինք): Ի վերջոյ, համեմատեցինք նաեւ շարքիս Ա-Գ տպագիրները, վերջում էլ ներառեցինք Վենետիկի երկրորդ եւ երրորդ հրատարակութիւնների տողատակերի ընթերցումները: Այսպիսով, համեմատուած էր առկայ նիւթի կէսից աւելին. մնում էր 12 ձեռագիր՝ հնգական՝ Երուսաղէմում եւ Վենետիկում, երկուսը՝ Վիեննայում: Անկախ տայիքի արժէքից, սրանց համեմատած չլինելու գիտակցութիւնը երկբայական էր թողնելու շատ եզրակացութիւնների իրաւացիութիւնը. այդ պակասով էլ նախ մեր անելիք հրատարակութիւնն էր թերարժէք լինելու, ապա՝ լրացուելու էր լաւագոյն դէպքում մի դար յետոյ: Թէեւ Վենետիկի հինգ ձեռագրի կարեւորագոյն թուացած ընթերցումներն արտայայտուած են միխիթարեան հրատարակութիւնների մէջ, սակայն միւս ձեռագրերի՝ հետեւողական ծրագրով եւ ամբողջապէս համեմատուած լինելը թելադրեց նաեւ նրանք լրիւ բաղդատելու անհրաժեշտութիւնը:

Ուստի դիմեցինք Գալուստ Կիւլպենկեան Հաստատութեան Հայկական բաժնի տնօրէն Պրն. Զաւէն Եկաւեանին (Ժախքի հոգացման խնդրանքով), Երուսաղէմի Հայոց պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանին, Միխիթարեան Միաբանութեան գոյգ ճիւղերի արբահայրեր՝ Հ. Գէորգ Պալեանին (Վենետիկ) եւ Հ. Պողոս վ. Գօճանեանին (Վիեննա). կարճ ժամանակ անց շնորհակալութեամբ ստացանք խնդրուած բոլոր ձեռագրերի ժապաւէնները: Այսպիսով, ինչ որ տեղ կողմնակի առիթով եւ ակամայ, հետեւելով նիւթի ընդգրկման եւ գործը կատարեալ տեսնելու ձգտման թելադրանքին, լանգեցինք բնագրի քննական հրատարակութեան իրագործման փաստին: Այժմ ձեռագիր եւ տպագիր ամբողջ նիւթը համեմատուած է, ուստի, օգտակար առաջարկներ ստանալու ակն-

կալիքով, քննութեան աւարտից առաջ, անհրաժեշտ համարեցինք բանասէրների ուշադրութեանը ներկայացնել աշխատանքի ընթացքում արուած՝ Բուզանդի տպագիրների ու ձեռագրերի այս քննութիւնը, որ բնագրի առաջարկանային հրատարակութեան ժամանակ պէտք է լրացուի սոսկ ձեռագրերի ուղղագրական առանձնալատկութիւնների մանրամասնումով:

\*\*\*

Միաբանը վերոյիշեալ յօդուածում նախ նկարագրել է բնագրի չորս տպագիր (մեր՝ տպագիրների շարքի Ա-Դ), արձանագրել սրանց մէջ՝ ութ ձեռագիր (մեր շարքի՝ Է, Ի, Լ, Խ, Մ, Զ եւ 2 չորոշակիացած) գործածուած լինելու փաստը. ապա՝ նկարագրել իր տեսած հինգ (շարքիս Բ, Զ, Ը, Ժ, Ծ) օրինակ, հաղորդել գոյութիւնն իրեն ի լրոյ յայտնի հինգ ձեռագրի (շարքիս Է, Թ, Պ, Կա, Կբ), «լրութեան համար ... աւելացրել» եւս երկուսը (շարքիս Զ եւ Կե): Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տպագիրների հիմքերից մէկը (մեր՝ Է) կայ նաեւ «ի լրոյ» չիշատակածների մէջ, Միաբանի թուարկած օրինակների հաշիւն այսպիսին է. 8+5+5(-1)+2=19 (ինքը հաշուել է 20): Այս ձեռագրերը համարելով «Փաւստոսի նորագոյն օրինակներ», իբրեւ յօդուածի իրաւամբ կարեւորագոյն նպատակ, ներկայացրել է իր իսկ յայտնաբերած՝ Փաւստոսից քաղուած, 11 գլուխ պարունակող էջմիածնի մատենադարանի երկու ճառքնաւոր (շարքիս՝ Վ, Տ), որոնք անուանել է «Փաւստոսի հնագոյն խմբի... ձեռագրեր»: Ի վերջոյ, արել է աղբիւրին եւ նրա բնագրին ընկալմանը վերաբերող մի շարք ուշագրաւ դիտարկումներ<sup>6</sup>:

Վերջերս էլ հրատարակուեց Բուզանդի երկի անգլերէն թարգմանութիւնը, որ, իբրեւ երեւոյթ, անշուշտ, ուրախալի է, բայց սրա օգտակար եւ ընդարձակ մատենագիտութեան առաջին՝ «Բնագրի ձեռագրեր, տպագիրներ եւ թարգմանութիւններ» բաժինն ունի միայն գոյքահամարներով եւ թուականներով, ըստ հաւաքածոնների (Երուսաղէմ, Երեւան, Վենետիկ, Վիեննա) թուարկուած 32 ձեռագրի մի անկատար եւ սխալաշատ ցանկ, որը թիւր պատկերացում է ստեղծում Բուզանդի ձեռագրերի մասին: Անկասկած, թարգմանիչը պարտաւոր չէր կատարելապէս ուսումնասիրելու բնագրի ձեռագրերը, աւելին՝ կարող էր իրեն բոլորովին ազատ համարել նման ցանկ պատրաստելու պարտաւորութիւնից, սակայն քանի որ այն կայ, ապա հարկ է արձանագրել, որ նրա սխալմունքները համարական պարզ ցանկի համար չափազանց շատ են<sup>7</sup>: Միաժամանակ, այս ցանկի առկալութիւնը եւս անհրաժեշտ է դարձնում Բուզանդի ձեռագրերի հետեւողական քննու-

թիւնը, ուստի, աշխատելով հնարաւոր չափով խուսափելու Միաբանի հետազօտութեան փաստերը եւ դրոյթները կրկնելուց, լընթացս շարադրանքի անելով նաեւ անհրաժեշտ ճշգրտումները, մեր առաջին խնդիրը համարում ենք առկայ տպագիրների յատկանիշերի բնորոշումն ու նրանց ձեռագրական հիմքերի հնարաւոր չափով պարզումը, երկրորդը՝ գոյութիւն ունեցող ձեռագիր օրինակների պարունակած նիւթի ներկայացումն ու դասակարգումը, ի վերջոյ՝ արտաքնագրական՝ հիմնականում ձեռագրագիտական տեղեկութիւններով Բուզանդի օրինակների ծագումնաբանական-ազգակցական կապերի հնարաւոր չափով ուրուագծումը<sup>8</sup>:

Ձեռագրերը ներկայացրել ենք վեց՝ «ամբողջական», «թերի», «հատուածական», «ճառընտրային», «յայտմաւուրային» եւ «կորուսեալ» բաժիններով, ամէն բաժնի մէջ պահպանելով ժամանակագրական սկզբունքը: Բոլոր ձեռագրերին նշանակել ենք հերթական թուահամարներ եւ տառանիշեր<sup>9</sup>, որոնք այստեղ նախատեսուած են առաւելապէս շարադրանքիս ներքին անդրադարձումների մէջ լիշտակելու դիւրութեան համար<sup>10</sup>:

#### ՏՊԱԳԻՐՆԵՐ

Ա. Բուզանդական պատմութիւն՝ Շարադրեալ Բուզանդայ մեծի պատմագրի. Զոր սկսեալ (գկնի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ) պատմէ զանցս անցից ժամանակաց դիպուածոց երկրին Հայաստանեայց... ի թուիս մերում ՌՃՀԹ (1730), Դեկտ. Ա: [Կ. Պօլիս 1730-1731], 396 էջ, (իրականում՝ 388 էջ՝ թուիչք 272րդից 281րդ, որ է՝ 8 էջ): Այս հրատարակութիւնն սկսուել է Հայոց ՌՃՀԹ՝ 1730ի Դեկտեմբերի 1ին եւ աւարտուել, հաւանաբար, յաջորդ՝ 1731 Օգոստոսի 4ին<sup>11</sup>: Տպագրիչ Սարգսի որդի Մարտիրոսի ծանուցման համաձայն՝ սա հիմնուած է մի ձեռագրի վրայ. «գի միով եւեթ օրինակաւ հազիւ գաղափարեցի տառապանօք» (էջ 396=388): Վենետիկեան եւ Պատկանեանի հրատարակութիւնների մէջ այս առաջին տպագիրը գրեթէ հաշուի չի առնուել. գուցէ Ռրոշ ընթերցումներ արձանագրուել են Վենետիկի միայն վերջին՝ Դ տպագրի տողատակերում. պարզել ենք, որ, հրատարակչի միջամտութիւնները չհաշուած, սրա հիմք ձեռագրի ընթերցումները հիմնականում նման են մեր շարքի Ա օրինակի՝ Երուսաղէմի հմր. 341 ձեռագրի ձեւերին: Այսինքն՝ համեմատական հրատարակութեան համար անպայման բաղդատելի օրինակ է<sup>12</sup>:

Բ. Փալատոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս, ի վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, լամի 1832, ՌՄՁԱ. [Ժ], 278 էջ (վերջինը վրիպակով տպուած՝ 178). վենետիկի առաջին հրատարակութիւնն է. Բուզանդի (եւ ոչ միայն նրա) մխիթարեան այս եւ յաջորդ տպագիրների հրատարակիչներն իրենց անունը չեն յայտնել: Այս մէկի «հոգացողի» անուան հարցը Նորայր Բիւզանդացին հպանցիկ ներկայացրել է այսպէս. «որպէս կը կարծէ Հ. Ռափայէլ Թրեանց ի Յառաջաբանի Բիւզանդեայ»<sup>13</sup>: Այս պնդման աղբիւրն ու հիմքը մեզ յայտնի չեն, սակայն բոլորովին այլ, ըստ հուժեան հիմնաւորուած տեսակէտ թելադրեց մեր բարեկամ Հ. Սահակ Ճեմճեմեանի 10 Դեկտեմբերի 1991 թուակիր նամակը. «բացայայտօրէն կրնամ ըսել թէ պատասխանատուն եղած է Հ. Եղուարդ Հիւրմուզեան. այս մանրամասնութիւնը ես անցեալին անցուցած եմ վանքիս պատմութեան մէջ, Ռրուն հատուածը կը ներփակեմ՝ իբրեւ ապացոյց ըսածիս»: Հատուածն այս է. «[1832 թ.] Մայիս 12ին, միշտ խօսելով մեր տպագրութիւններուն մասին, տպարանապետն Հ. Յովհաննէս [Զօհրաբեան] կը գրէ Հ. Գէորգին [Հիւրմուզեան. ի Պոլիս]. «Աւարտեցաւ տիպ գրից Սոսվէի եւ Բուզանդն՝ ըստ գրից Նախնի մատենագրաց. զհոգ երկոցունց մատենիցդ ունի սիրեցեալ Հարազատն քո եւ իմ [իմա՝ Հ. Եղուարդ]»:

Օգտագործուած ձեռագրերի մասին այս տպագրի առաջաբանում ասուած է. «Հնգեակ օրինակաց բաղդատութեամբ առաջիկայ տպագիրս արարաւ. յորոց մին հնագոյն եւ անթուական ի ներհուն գրչէ գրեալ, որում մանաւանդ զհետ չոքաք, զկարեւոր զանազանութիւնս այլոց օրինակացն առ ստորեւս իջից նշանակեալ՝ ըստ մերումս առ բազմաց վկայեալ հաւատարմութեան» (էջ [թ.]): Ըստ այսմ՝ տպագրիս հիմքը հնագոյն եւ անթուական՝ «ի ներհուն գրչէ» գրուած մի ձեռագիր է, որի հետ համեմատուել է եւս չորսը, այսինքն՝ այս երկրորդ տպագիրն արուած է հինգ ձեռագրի հիման վրայ: Ուրեմն, տպագրութիւնն արուել է միաբանութեան մատենադարանի (այսօր եւս) ունեցած հինգ օրինակով, Ռրոնք, ինչպէս շուտով կը տեսնենք, իրականում ունեն վեց ձեռագրի արժէք<sup>14</sup>: Բուզանդի մխիթարեան հրատարակութիւնները համեմատելով վենետիկեան չորս օրինակի մեր նկարագրութիւնների<sup>15</sup> հետ, համոզուեցինք, որ սրանց հիմքը եղել է Արք. Ղազարի միակ բոլորգիր Բուզանդարանը՝ ձեռ. հմր. 1188 (մեր՝ 12 Լ): Նաեւ նկատենք, որ մեր նոյն նկարագրութիւնների հիման վրայ դատելով, տողատակին նշուած ընթերցումները բաւական սակաւաթիւ են եւ շատ հեռու են ձեռագրերի պատկերը կատարեալ ներ-

կայացնելուց: Միաժամանակ պարզ է, որ հրատարակիչն առաջնորդուել է իր ժամանակի բնագրագիտութեան համար լիովին ընդունելի եղանակով՝ հիմք օրինակի «վրիպակներն» առանց նշեու սրբագրել է միւս ձեռագրերի քերականական եւ ուղղագրական ճիշդ ձեւերով:

Կարեւոր է նաեւ Հ. Եղուարդ Հիւրմուզեանի յաջորդ պարզաբանումը. «Բայց խոստովանիմք, զի առ ձեւին գտեալ օրինակքս չեղեն բաւական յանսխալ տպագրութիւն. քան զի բազում ուրեք եւ ի յայտնի վրիպական ամենեքին համաձայնէին, թերեւս անդատին ի միոջէ օրինակէ գաղափարեալք» (էջ [Ժ])<sup>16</sup>: Ահա այսպէս, առաջին՝ համեմատական հրատարակութեան հետ շրջանառութեան մէջ է մտնում այն ենթադրութիւնը, թէ մեր պատմագրութեան այս կարեւոր յուշարձանի բոլոր օրինակները ծագում են նոյն գաղափարից<sup>17</sup>, որ գուցէ եւ սխալ չէ, բայց աւելի ճշգրիտ կը լինէր ասելը, թէ Բուզանդարանը խմբագրութիւններ չունի, որպէսզի յետագայում չստեղծուէր այն թիւր մտայնութիւնը, թէ ձեռագրերի համեմատութեամբ այս բնագրի աղաւաղումները շտկելն անհնար է, ուրեմն եւ պէտք է միայն լաւ գինուել ոսկեղարի գրարարի քերականութեան իմացութեամբ եւ առատօրէն սրբագրել այն:

Գ. Փաւստոսի Բիւզանդացույ Պատմութիւն Հայոց, ի հայրապետութեան Տ. Տ. Գէորգայ վեհափառ կաթողիկոսի ամենայն Հայոց. ի լոյս ած Ք[երովբէ] Պատկանեան], Ս. Պետերբուրգ, 1883. 234 էջ: Մինչեւ վերջերս սա համարում էր լաւագոյնը<sup>18</sup> (գոնէ՝ երկու լաւից մէկը), որի համար հայ բանասիրութիւնը պարտական է Քերովբէ Պատկանեանին: Այն նախորդից տարբերում է միայն նրանով, որ աւելացուած է եւս մի ձեռագրի համեմատութիւն. «Երրորդս այս արարաւ բաղդատութեամբ անթուական գրչագիր օրինակի ընդ տպագրելոյն ի վենետիկ: Ինչ ինչ տարբերութիւնք ընթերցման եւ ուղղութիւնք նշանակեցան ի մէնջ ի լուսանցս, գրագծօք այլովք աննշանօք զանց արարեալ: Մանաւանդ զի եւ ձեռագրին որ եհաս ի ձեռս մեր, ոչ կարի զանագանէր յայլոց, զորոց ճառէ յառաջաբանն 1832, եւ ընդ նոսա ի միոջէ ի հնագոյն օրինակաց գաղափարեալ տեսանի» (էջ [ա]):

Այսպիսով, այս տպագրով հրատարակ են հանում նաեւ վեցերորդ (Պոլսի հրատարակութիւնը հաշուելու դէպքում՝ եօթերորդ)<sup>19</sup> ձեռագրի՝ հրատարակչի կարծիքով ո՛չ «աննշան» եւ ուշադրութեան արժանի ընթերցումները: Նոր ձեռագրի մասին հաղորդուած տեղեկութիւններն անորոշ են, սակայն այն Երեւանի Մա-

տենադարանի ներկայիս հմր. 4584 ձեռագրին է<sup>20</sup>, որ 1901ին արդէն էջմիածնում էր, բայց, Միաբանն այն տեսած չլինելով<sup>21</sup>, իրաւացիօրէն ենթադրել է, թէ Կարապետ Եղեանի մօտ եղած եւ Ասողիկի Պատմութեան Մալխասեանցի հրատարակութեան հիմնական օրինակն է. համեմատեցինք եւ համոզուեցինք, որ Գ տպագրի տողատակերում «յիմում օրինակի» բնորոշում ունեցող բոլոր ընթերցումները ճշգրիտ համապատասխանում են մեր 7 է՝ հմր. 4584 ձեռագրին:

Դ. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ի չորս դպրութիւնս. Երկրորդ տպագրութիւն, Ի վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամի 1889, ՌՅԼԹ. ԺԱ, 289 էջ. սա վենետիկեան երկրորդ տպագրութիւնն է. «Յետ առաջնոյ տպագրիս՝ հանդիպեալ մեր եւ այլոյ անթուական գրքչագրի, թէպէտ եւ ոչ հին եւ ոչ գերծ ի վրիպանաց, յաւելաք ի սմանէ ի ստորեւս իջիցն՝ տարբերութիւնս սակաւս ընթերցուածոց, որպէս եւ ինչ ինչ ի Պատկանեան տպագրէն» (էջ ԺԱ): Այս տպագրի «հոգացողի» անունը գոնէ ենթադրելու համար որեւէ կոռուան չունենք. նա երբեմն ուղղել է 1832ի տպագրի շարադրանքի որոշ վրիպումները եւ ճոխացրել տողատակի ընթերցումները. այսինքն՝ կրկին համեմատել է նոյն ձեռագրերը եւ նշանակել արդէն իրեն կարեւոր թուացած տարբերութիւնները: Սրա ոչ անհական նորութիւնը եւս մի անթուական վրիպակներից ոչ գերծ օրինակի եւ Պատկանեանի տպագրի որոշ ընթերցումների արձանագրումն է: Դժուար է նաեւ այդ նոր ձեռագրի մասին դատողութիւն անելը, քանզի եթէ Ս. Ղազարի մատենադարանն ունէր (եւ ունի) ընդամէնը հինգ ձեռագիր Բուզանդ, ապա վեցերորդը պէտք է հանդիպած եւ համեմատուած լինի մի այլ տեղում (պատկանի այլ հաւաքածուի)<sup>22</sup>: Միով բանիւ, չորրորդ տպագրով հրապարակուեցին եօթերորդ (կամ ութերորդ) ձեռագրի կարեւոր թուացած ընթերցումները:

Ե. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ի չորս դպրութիւնս. Երրորդ տպագրութիւն, վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամի 1914, ՌՅԿԳ. 361 էջ. սա վենետիկեան երրորդ հրատարակութիւնն է, եւ նախորդի ճշգրիտ վերարտադրութիւնը. «Չայս երրորդ տպագրութիւն Փաւստոսի արարաք լերկրորդէ անտի, չունելով առ ձեռն լաւագոյն օրինակ առ ի յուղղել զվրիպակս» (էջ 343):

Նկատենք, որ դրանից տաս տարի առաջ արդէն տպագրուել էր Միաբանի լիշեալ յօդուածը, ուր, իրաւացիօրէն, իր ժամանակի

եւ իրեն յայտնի ձեռագիր օրինակների ընդհանուր տեսութիւնից առաւել կարելոր (եւ շեշտուած) նորութիւնը համարուած էր այն, որ Բուզանդարանի ձեռագրերը վերաբերում են 1622-1700 թուականներին, մինչդեռ նրա 11 գլուխ օրինակուած են էջմիածնի (այժմ՝ Երեւանի) Մատենադարանի ժԲ. դարի երկու ճառքնտիրների մէջ, որ իր հերթին նշանակում է, թէ վերջիններս աւելի են ճշգրտելու Բուզանդարանի բնագրի աղաւաղումները: Յիշենք նաեւ, որ դարասկիզբին կազմուած էր վենետիկի Մխիթարեան մատենադարանի ձեռագրացուցակը, որի՝ Բուզանդի այս հրատարակութիւնից տաս տարի անց տպագրուելիք երկրորդ հատորի նիւթը ճառքնտիրներն էին: Ամենայն հաւանականութեամբ հենց ցուցակի կազմող Հ. Բարսեղ Սարգիսեանը պէտք է վերջիններիս Ա, Բ, Զ եւ Գ օրինակների<sup>23</sup> մէջ առաջինը նկատէր Փաւստոսեան մի հատուած եւ այդ չորս ձեռագրի համեմատութեամբ կազմելով հրատարակէր իրրեւ երրորդ տպագրի կարելորագոյն նորութիւնը, որ նաեւ, եւ հաւանաբար, լիշելի է Սարգիսեանի բազում վաստակոց շարքում:

Զ. Փաւստոսի Բուզանդացուց Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. Զորրորդ տպագրութիւն, վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամի 1933, ՌՅԶԳ. 295 էջ. վենետիկեան չորրորդ տպագրութիւնն է. նախորդներից տարբերուած է հետեւեալով. «Յայսմ տպագրութեան յաւելան ընդ առաջնոց զանազանութեան ընթերցուածոց եւ սրբագրութիւնք ինչ, յայնցանէ իսկ՝ զոր արար եւ ի լոյս հած առանձինն Հ. Գ. Վ. Նահապետեան յուխտէս մերմէ. եւ ի ստորեւ նշանակեցան վրիպակք բնագրիս» (էջ 10): Թէեւ այստեղ տրուած է միայն Նահապետեանի անունը, բայց արձանագրուած են թէ՛ նրա եւ թէ՛ այլ բանասէրների (օրինակ՝ Հրաչեա Աճառեանի) առաջարկած առանձին (ոչ բոլոր) սրբագրութիւններ, փոխարէնը տողատակ իջեցնելով հիմք ձեռագրի ունեցած ձեւերը. ըստ որում՝ ոչ մի դէպքում սրբագրութեան հեղինակն ու նրա գործի էջը նշուած է: Միաժամանակ՝ «առ ի դիւրութիւն ուսումնասիրաց» այստեղ առաջին անգամ Բուզանդարանի բնագրի հետ տրուած է նրան վերաբերող կարելոր ուսումնասիրութիւնների (9 նիւթ) մի փոքրիկ մատենագրութիւն՝ «զգործս ոմանս կարելորս բանասիրաց» (էջ 10-11)<sup>24</sup>:

Ամփոփենք տպագրիւններին վերաբերող այս խօսքը. Բուզանդարանի տպագրութեան աւանդութիւնը կրողը դերագանցապէս վենետիկի Մխիթարեան միաբանութիւնն է. ուրեմն՝ Պոլսի առաջինի՝ մեզ այնչափ հիմքից, Պատկանեանի համեմատած յայտնի օրինա-

կից բացի, հրատարակուած մնացեալ օրինակները եղել են նոյն միաբանութեան մատենադարանի՝ ստորեւ ներկայացուելիք հինգ ձեռագրերը. ընդամէնը՝ ութ: Ապագայ գիտական բնագրի կազմութեան համար ի նորոյ համեմատուել են թէ՛ վերջին հինգը եւ թէ՛ չպահպանուած կամ անլայտ ձեռագրին փոխարինող Պոլսի տպագիրը, որովհետեւ հրատարակիչները միշտ նշել են միայն կարեւոր գիտած տարբերութիւնները: Այս ամէնից յետոյ միայն պէտք է հաշուի նստել հրատարակիչների իմաստաւորումների (վերծանութիւն, կէտադրութիւն, եւ.ն.) հետ:

### ՁԵՌԱԳՐԵՐ

#### ԱՄԲՈՂՁԱԿԱՆ

1. Ա. Եղմ. հմբ. 341. ՌՊԸ=1599, տեղի՝ Բաղէշ, Պատմագիրք (Խորենացի, Բուզանդարան, Լաստիվերցի), գրիչ՝ Մարտիրոս, ստացող՝ Ազարիա կթղ. Ստոյ<sup>25</sup>, 25x19 հրդչփ. մեծութեան 720 էջ (=360 թերթ), երկսիւն, բոլորգիր, 27 տող<sup>26</sup>:

Բուզանդի ձեռագրերի պահպանուած կամ լայտնի հնագոյն օրինակն է. ըստ այդմ՝ էջահամարներով բերում ենք Խոստաբանութեան, գլխացանկերի եւ դպրութիւնների սկիզբն ու վերջը<sup>27</sup>:

- էջ 283-284. Բուզանդարան պատմութիւնք. Խոստաբանութիւն նախագիտելի. Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս... սմին գոր ասելոցս եմ խոստումն:

- էջ 284-6. Երրորդ կանոնք պատմութեանց մինչեւ ցԻԱ. Ա. Յաղագս որ ինչ յետ քարոզութեանն... եւ Ներսէս արքայն պարսից լերկրէն Հայոց միաձի ճաղողրեալ լերկիրն Պարսից փախստական անէր:

- էջ 286-350. Երրորդ դպրութիւն. Ա Յաղագս որ ինչ յետ քարոզութեանն Թաղէոսի... եւ բարեաւ առ Թագաւորն լուղարկէր. կատարեցաւ Երրորդ դարք քսան եւ մի պատմութեանց դպրութիւնք ժամանակագրի մեծի պատմագրի, որ էր ի ժամանակագիր Յունաց:

- էջ 350-9. Չորրորդ դպրութիւն Բիւզանդեա չորրորդ խոստովանութեանն, գոր ասելոցս եմ կարգել դպրութիւն կանոնք դարք եւ դարք պատմութեանց զրոյցաց խոստումն խոստացելոցս. Ա. Յաղագս թէ որպէս յետ բազում շփոթի... եւ թէ զինչ շատ գործեցին ընդ աշխարհն եւ կամ թէ զիարդ սատակեցան Վահան եւ կին յիւրեանց որդոյն:

- էջ 359-491. Չորրորդ դպրութիւնք կանոնք ժամանակագիրք մատենից տան որդոց Թորգոմայ աշխարհին Հայոց: Առաջին թէ որպէս յաղագս յետ բազում շփոթի... եհար սատակեաց

զհայր իւր եւ զՈրմիզդուխդ զմայր իւր՝ զքոյր Շապու Պարսկից  
Թագաւորին, եւ ինքն փախստական լինէր յերկիրն Խախտեաց:

- էջ 492-5. Դպրութիւն Հինգերորդ Բուզանտա. Հինգերորդ  
խոստարանութիւն զոր առնելոցս եմ կարգել զդպրութիւն դպրու-  
թեանց կանոն ժամանակագիր մատենից. Ա. Յաղագս Թագաւորե-  
լոյն Պապայ յերկրին Յունաց... ԽԴ. Յաղագս թէ զիարդ Թագաւորե-  
րեցոյց Մանուէլ մեծ սպարապետն զմանուկն Արշակ, ապա եւ ինքն  
Մանուէլ մահու մեռանէր:

- էջ 495-576. Հինգերորդ դպրութիւն կանոնք ժամանակա-  
գիրք տան որդոցն Թորգոմա իշխանին Հայոց. Ա Յաղագս Թագա-  
ւորելո Պապա յերկրին Յունաց եւ գալոյ ի Հայս... կղկղաթ կաթո-  
գի լինէին զիւրեանց քաջ զօրավարէն՝ զփրկչէն իւրեանց, զյաղ-  
թական զանուանին զարգասութենէն յայնպիսոյն հեռացեալ զնաց-  
եալ ի յանջատելն ի մեկնելոյն:

- էջ 576-7. Բիւզանդեա վեցերորդ խոստարանութիւն պատ-  
մութեանց կանոնք ժամանակագիր մատենից. Ա. Յաղագս ընդ եր-  
կու բաժանելոյ աշխարհին Հայոց... ԺԵ. Յաղագս Գնդա սրբոյ եւ  
առաքինոյ, որ յայնմ ժամանակի գլխաւոր էր արեղայիցն Հայոց  
անապատաւորացն մենակեցաց վաներացոյ. Ստորոտ ամենայն  
պատմութեանց յաղագս իմ տեղեկութեան, որք միանգամ զմատ-  
եանս ընթեռնուք՝ տունք Ժ, համարական թուաւք:

- էջ 577. Վերջ առաջաբանութեան վճարումն մնացուածք  
բանից ի ծայրէ վեցերորդ դպրութեան. Ա. Յաղագս ընդ երկուս  
բաժանելոյ աշխարհին Հայոց... բայց այլքն գայլ գաւառս շրջէին  
հրամանաւն իւրեանց գլխաւորին Գնդայ. եւ սրբոյն Տրդատայ  
կայեանք բնակութեան էր ի գաւառն Տարնոյ շինեալ զիւր եղբ[այ-  
րանոցս]. (փակագծինը՝ այլ ձեռքով):

2. Բ. Երեւանի հմր. 1867 Ռ-ՀԱ=1622 թ., տեղի՝ Ամիդ<sup>28</sup>, Պատ-  
մագիրք, գրիչք՝ Ստեփանոս, Ամիրչահ, Յովհաննէս սրկ.: 21.5x15,5  
հրդչփ. մեծութեան 329 թերթ, թուղթ, միասիւն, նոտրգիր, 26  
տող: Միաբանի՝ «Գ. Ե»: Ունի ժամանակագրութիւն Միքայէլ Ասո-  
րու եւ Բուզանդարան:

- էջ 190ա-327ա. Բուզանդարան պատմութիւնք. Խոստաբա-  
նութիւն նախագիտելի է - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ  
պատմութեանցս ժամանակագիր կանոնք... եւ սրբոյն Տրդատա  
կայեանք բնակութեան էր ի գաւառն Տարաւնոյ շինեալ զիւր:

Սկիզբք գլխոց եւ դպրութեանց. 190աբ՝ Խոստաբանութիւն.  
190բ-1բ՝ Գլուխք, 191բ-220ա՝ Գ դպրութիւն. 220ա-3բ՝ Գլուխք,

223բ-280ա՝ Դ դպրութիւն. 280ա-1բ՝ Գլուխք, 281բ-321բ՝ Ե դպրութիւն. 321բ՝ Գլուխք, 321բ-7ա՝ Զ դպրութիւն:

Ձեռագրի ատեղծումը. «... գրեցաւ այս Միխայիլս ձեռամբ սարկաւագացն Ամիրշին եւ Յովանիսին, որ սկիզբն առնէին գըրչութեան եւ ուսանէին առ ոտս տէր Մինաս գրչի. Աստուած իւրեանց շնորհք եւ իմաստութիւն տա, որ զայս հոգեւոր արուեստ կատարեալ ուսանին: ԹՎին ՌՉԱ (1622), Յունիսի է (7), աւրն ուրբաթ ...» (327բ): Պարզ է, որ յիշատակարանս գրել է մի չորրորդ՝ այստեղ չյիշուած մարդ, որի անունն էլ կայ մինչեւ այժմ աննկատ մնացած մի յիշատակագրութեան մէջ. 309ա (Ե, լե գլխի վերջ). «Յիշեա՛ յայսմ վայրի զսովեալս հոգեւորական կերակրոյն եւ զյետին քան զամենեսեան ի վաստակս արդարութեան զգրիչս Ստեփանոս, ո՛վ ընթերցողք, եւ վասն սխալանացս անմեղադիր լերուք»: Այսպիսով, Ամիրշայից եւ Յովհաննէսից բացի, ձեռագրիս վրայ աշխատել է նաեւ Ստեփանոս գրիչը, որն արդէն անփորձ չէր, վարպետ գրիչ էր եւ բազմաթիւ ձեռագրեր<sup>29</sup> էր գրել, ուրեմն երեւի հենց նա էլ, աշակերտների հետ փոխնիփոխ գրելուց բացի, ծախէ ծայր սրբագրել է ամբողջ ձեռագիրը. նորուս գրիչները շատ են սխալուել, Ստեփանոսի սրբագրութիւնները բաւական շատ են, բայց եւ աշակերտների անփորձութիւնը նպաստել է դադարի օրինակի շատ երեւոյթների (օրինակ՝ օ վերարտադրելիք աւ-ի) պահպանմանը: Միով բանիւ, անմաքուր տեսք ունենալով հանդերձ, ձեռագիրս խնամքոտ օրինակութիւն է:

1637թ. խօջալ Մարգարէի որդի Պետրոսը ձեռագիրս, հաւանաբար Ամիրից, գնել եւ նուիրել է Շոռոթի Ս. Յակոբ եկեղեցուն (328ա-9ա)<sup>30</sup>. 60 տարի անց արդէն այն անցել է էջմիածնի մատենադարանին. «Յիշատակ է Միխայէլ պատմագիրքս ի դուռն Ս. էջմիածնի, ի թուին ՌՃԺ եւ Զ (1667)ումն» (1բ):

3. Գ. Եղմ. հմր. 307: ՌՉԳ=1624 թ. տեղի՝ անյայտ, Միքայէլ Ասորի եւ Բուզանդարան. ստացող՝ Կարապետ վ.: 26x20 հրդչփ. մեծութեան 310 էջ (=155 թ.), երկսիւն, վարժ բոլորգիր, 41 տող:

- էջ 175-310. Բուզանդարան պատմութիւնք. Խոստաբանութիւն նախագիտելի է- Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ սրբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր ի գաւառն Տարօնոյ շինեալ զիւր եղբ[արց]. (վերջին վանկը՝ այլ ձեռքով):

Գլուխք եւ սկիզբք դպրութեանց. էջ 176՝ Գ, 204՝ Դ, 265՝ Ե, 305՝ Զ<sup>31</sup>:

4. Դ. Եղմ. հմր. 303. ՌՂԸ=1649 թ. տեղի՝ Կոստանդնուպոլիս, Միքայել Ասորի եւ Բուզանդարան, գրիչ՝ Յարութիւն դպիր, ստացող՝ Յակոբ դպիր. գրուելուց կարճ ժամանակ անց նուիրուել է Երուսաղէմի Սրբ. Յակոբեանց վանքին՝ «չիշատակ է Ագաթանգեղոս եւ Միայել դիրքս ի սուրբ Երուսաղէմ, առ դրան Սուրբ Յակոբայ» (էջ 416): Նախապէս նոյն կազմի մէջ ունեցել է նաեւ Ագաթանգեղոս (այժմ՝ Եղմ. հմր. 314), Խորենացի եւ Եղիշէ (այժմ՝ Եղմ. հմր. 310):

26x20 հրդէփ. մեծութեան 418 էջ (=209 թերթ), թուղթ, երկախն, նոսրգիր, 31 տող:

- էջ 235-415 Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելի է- Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ սրբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր ի դաւառն Տարօնոյ շինեալ զիւր եղբայր:

Գլուխք եւ սկիզբք դպրութեանց. էջ 236՝ Գ, 274՝ Դ, 356՝ Ե, 407՝ Զ<sup>22</sup>:

5. Ե. Եղմ. հմր. 1553. ՌՂԸ=1649 թ. տեղի՝ Բաղէշ, Պատմագիրք, գրիչ եւ ստացող՝ Դաւիթ արեղայ Բաղիշեցի՝ որդի Աղէքանոսի: 14,5x10 հրդէփ. մեծութեան 418 թերթ, միասին, նոսրգիր, 23 տող:

Բուզանդարանից առաջ ունի Միքայել Ասորի, յետոյ՝ Սամուէլ Անեցի եւ Աշխարհագրութիւն Մելիքսէդ վրդ.ի: Գրիչը Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի սան, Բաշէղի առաջնորդ Մեսրոպ վարդապետի աշակերտն է: Բողոքում է. «զի օրինակն փութով կուտանէին, եւ ես փութով գրեցի... վասն այնորիկ նոսր եւ փութով գրեցի»: Այլեւ՝ ունեցել է պատմական տեղեկատու կազմելու նպատակ եւ օրինակուող նիւթերը յաճախ ծաղկաքաղ է արել, իսկ Բուզանդարանի Խոստարանութիւնը փոխարինել (կամ՝ նրա սկզբից աւելացրել) է հետեւեալով. «Բուզանդ պատմագիրն... զոր ի քարոզութենէ առաքելոյն Թաղէոսի, զԹագաւորս, զհայրապետս եւ զգործս նոցա եւ զպատերազմ, ի թագաւորութենէն Խոսրովու մինչեւ ի միւսն վերջի ժամանակն: Եւ ի քահանայապետութենէն Վրդանա մինչեւ ցայնոսիկ ի վերջինսն, որ կային գլխաւոր եպիսկոպոսք Հայոց, կարգօք, թուով, համարով կանոնեալ դրոշմեցի»: Այս պատճառով էլ Բուզանդարանը սովորականից տարբեր սկիզբ ունի.

- էջ 216ա-346ա. Բուզանդ. Առաջին գլուխ - Յաղագս որ ինչ յետ քարոզութեան Թաղէոսի առաքելոյն... եւ սրբոյն Տրդատայ

կախանք բնակութեան էր ի գաւառն Տարօնոյ շինեալ զիւր եղ-  
բայրանոցն<sup>33</sup> :

6. Զ. Երեւանի հմր. 3071. ՌՃԶ=1657 թ.<sup>34</sup>, տեղի՝ Յովհաննա-  
վանք եւ Յուշոյ վանք, ժողովածու, գրիչ եւ ստացող՝ Զաքարիա  
դպիր Քանաքեռցի: 20,2x14,5 հրդչփ. մեծութեան 462 թերթ, մի-  
ասիւն եւ երկսիւն, նոտրգիր, 34-35 տող: Միաբանի՝ «Տ. Ն»: Պա-  
րունակում է՝ Կիրակոս Գանձակեցի, Զենոբ Գլակ, Մատթէոս Ուռ-  
հայեցի, Թովմա Մեծոփեցի, Բուզանդարան, Միքայէլ Ասորի, Յա-  
կոբ Ղրիմեցու տոմարագիտական երկերը, եւ յն.:

285ա-386ա. Բուզանդական պատմութիւնք. Խոստաբանութիւն  
նախագիտելի է. Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմու-  
թեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ սրբոյն Տրդատայ  
կախանք բնակութեանն երի (այսպէս - Գ. Տ-Վ.) գաւառն Տարաւ-  
նոյ շինեալ զիւր:

286աբ՝ Խոստաբանութիւն. 285աբ՝ Գլուխք, 286բ-308բ՝ Գ  
դպրութիւն. 308բ-10բ՝ Գլուխք, 310բ-355բ՝ Դ դպրութիւն. 355բ-  
6բ՝ Գլուխք, 356բ-382ա՝ Ե դպրութիւն. 382բ՝ Գլուխք, 382բ-  
386ա՝ Զ դպրութիւն<sup>35</sup>:

Գրչութեան հանգամանք. «... եղեւ աւարտ եւ ի կատար պատ-  
մութեանս, որ կոչի Բուզանդ, որ է Փօստոս ի թուարեութեանս  
հայկազնեա Ռերորդի, ձերորդի եւ Զեակ (1657) թուոյ, ի յերկրիս  
Արարատեան, ի նահանգիս Կարբոյ եւ ի սուրբ ուխտս, որ կոչի  
Յօհաննա վանք, ընդ հովանեաւ մօր լուսոյ Սուրբ Աստուածածնին...  
Եւ գիտեա՛, զի կատարումն սորա եղեւ ի վանս Յուշոյ, ի դրան  
Սուրբ Սարգսի զօրավարին եւ որդոյն նորա Մարտիրոսի. եւ ա-  
ռաջնորդ Սրբոյս՝ մեծ հռետորն եւ քաջ փիլիսոփոսն Ոսկան վար-  
դապետն...» (389ա-90ա)<sup>36</sup>:

7. Է. Երեւանի հմր. 4584. ՌՃԺէ=1668 թ., տեղի՝ Տիգրա-  
ն[ակերտ], Պատմագիրք<sup>37</sup>, գրիչ՝ Աբրահամ երէց, ստացողք՝ Ղարա-  
ղաշ մականուամբ խոջայ Աւետիս եւ խոջայ Սահակ Ամթեցիներ:  
28x20,3 հրդչփ. մեծութեան 389 թերթ, թուղթ, նոտրգիր, երկսիւն  
(գրադաշտը՝ 20,5x14), 56 տող: Միաբանի՝ «4.Դ»: Ունի՝ Խորենացի,  
Ասողիկ, Լաստիվերցի, Եւսեբիոսի Պատմութիւն եկեղեցական,  
Ագաթանգեղոս, Դաշանց թուղթ, Մեսրոպ երէց, Յովհան Մամի-  
կոնեան, Բուզանդարան, Եղիշէ, ԿԶ գլուխ Պատմութեան Օրբբեա-  
նի, Պատմութիւն Հացունեաց խաչի, Սոկրատի Եկեղեցական պատ-  
մութիւն, Միքայէլ Ասորի, Վարդան Արեւելցի, Կիրակոս Գանձակե-

ցի, Թովմա Մեծոփեցի (եւ վարք իւր ի Կիրակոսէ Բանասիրէ), Պատմութիւն Սմբատ սպարապետի եւ Ղեւոնդ երէց:

Բուզանդարանի սկզբում (186ա) ունի հետեւեալ մուտքը. «Իւրաքանչիւր ոք ի կորովաբան եւ լիմաստախոհ արանց յազգին իւրում զժամանակագրութիւնս կարգեալ ձեռնարկեաց, առ որս երեւելագոյն քան զյոյովս Եւսեբի երանելի ի մէջ առաջնոցն եւ վերջնոցն. եւ զհետ նորա Սոկրատէս պատմագիր՝ ալլովք բազմօք: Իսկ մերայինս ազգի ասել առաջին պատմագիր զԱգաթանգեղոս, որ գրեաց զպատճառ լուսաւորելոյ զՀայս սրբոյն Գրիգորի նորասքանչ համբերութեամբ, եւ ապա Մովսէս Խորենացի հաւաստապատում, եւ զկնի Եղիշէ եւ Ղազարիկ, եւ Փօտոս, որ է Բուզանդ պատմիչ յառաջ քան զինքն: Զայս չափ բանս ի Գաւազանագրոցն գրեցաք՝ ի Սամուէլի քահանայի ասացեալ վասն պատմագրոց կարգի. եւ հասեալ ի Փօտոս, որ է Բուզանդ Պատմիչօք[ն]եա իսկ եւ Բան եւ է»<sup>38</sup>:

- 186ա-217ա. Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելի - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ սրբոյն Տրդատա կայեանք՝ ընակութեանն էր ի դաւառն Տարօնոյ շինեալ զիւր եղբ[այրանոցս]. (փակագծինը՝ ալլ ձեռքով):

186ա՝ Խոստարանութիւն. 186ա՝ Գլուխք, 186բ-93ա՝ Գ դպրութիւն. 193ա-4ա՝ Գլուխք, 194ա-207ա՝ Դ դպրութիւն. 207ա՝ Գլուխք, 207բ-16ա՝ Ե դպրութիւն. 216ա՝ Գլուխք, 216ա-7ա՝ Զ դպրութիւն. (Դ-Զ դպրութիւնների շարադրանքի մէջ գլուխների խորագրերը չունի. գուցէ զեղչել է ծաւալը փոքրացնելու համար, որովհետեւ գիրը շատ մանր եւ խիտ է՝ աշխատել է քիչ տեղում շատ բան տեղաւորել):

8. Ը. Երեւանի հմբ. 1482. ՌձԻԷ=1678 թ., տեղի՝ Ալիփուղար գիւղ, Պատմագիրք<sup>39</sup>, գրիչք՝ Գրիգոր, Թումա, ստացող՝ Մինաս Համթեցի: 31x22,7 հրդչփ. մեծութեան 558 թերթ, երկսիւն, նոտրգիր, 41 տող: Միաբանի՝ «Յ.Մ»: Պարունակում է՝ Խորենացի, Ասողիկ, Լաստիվերցի, Եւսեբիոսի Պատմութիւն եկեղեցական, Ագաթանգեղոս, Դաշանց թուղթ, Մեսրոպ երէց, Յովհան Մամիկոնեան, Բուզանդարան, Եղիշէ, ԿԶ գլուխ Օրբելեանի, Միքայէլ Ասորի, Խորենացւոյ Աշխարհացոյց, Կիրակոս Գանձակեցի, Սոկրատայ Եկեղեցական պատմութիւն: Ինչպէս տեսնում ենք, Միաբանը իրաւացի է՝ «տփի կազմութեամբ» նրա այս Մը շատ նման է Դին, այսինքն<sup>40</sup>, նախորդ՝ Երեւանի հմբ. 4584 ձեռագրին, որից եւ օրինակւած կարող էինք համարել սրա նիւթերի մեծ մասը<sup>41</sup>, նաեւ՝

Բուզանդը, եթէ չլինէր այն հանգամանքը, որ ի տարբերութիւն նախորդի, սա բոլոր դպրութիւնների շարադրանքի մէջ ունի գլուխների խորագրերը: Սակայն Բուզանդարանից անմիջապէս առաջ (278ա) կայ Երեւանի 4584ի՝ Սամուէլ Անեցուց առնուած մուտքը:

- 278ա-329ա. Բուզանդարան պատմութիւնք. Խոստաբանութիւն նախագիտելի - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ սըրբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր ի գաւառն Տարօնոյ շինեալ զիւր եղբայր:

278ա՝ Խոստաբանութիւն. 278աբ՝ Գլուխք Ա-ԻԱ, 279ա-89ա՝ Գ դպրութիւն. 289ա-90ա՝ Գլուխք Ա-ՄԹ, 290բ-312ա՝ Դ դպրութիւն. 321աբ՝ Գլուխք Ա-ԽԴ, 313ա-27ա՝ Ե դպրութիւն. 327աբ՝ Գլուխք Ա-ԺԶ, 327բ-9ա՝ Զ դպրութիւն:

9. Թ. Եղմ. հմբ. 230. 1678 թ.<sup>42</sup>, տեղի՝ Երուսաղէմ, Պատմագիրք, գրիչ եւ ստացող՝ Սարգիս եպս. Եւդոկիացի (Սահէթճի)<sup>43</sup>: 28x20 հրդէփ. մեծութեան 546 էջ (=273 թերթ), թուղթ, երկսիւն, նոտրգիր, 42 տող: Ունի նաեւ Ագաթանգեղոս, Դաշանց թուղթ, Գիւտ նշխարաց Լուսաւորչի, Խորենացի եւ Եւսեբիոսի Պատմութիւն եկեղեցական:

- էջ 261-382. Բուզանդարան պատմութիւնք. Խոստաբանութիւն նախագիտելի է - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ սըրբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր ի գաւառն Տարօնոյ շինեալ զիւր եղբ:

Սկիզբք գլխոց եւ դպրութեանց. էջ 261՝ Գ, 287՝ Դ, 343՝ Ե, 377՝ Զ<sup>44</sup>:

10. Ժ. Վենետիկի հմբ. 721/915<sup>45</sup>. ՌձԽԹ=1700 թ., տեղի՝ Կ. Պոլիս, Հաւաքածոյ. Ազգերեան ցուցակից ի վեր ճանաչուած իբրեւ «Յաճախապատում Դ». 20,5x14,8 հրդէփ. մեծութեան 380 թղթի թերթ (էջակալուած՝ 1-746). միջանի ձեռքի արտադրանք, միասիւն, նոտրգիր, 32-33 տող: Յաճախապատումից բացի պարունակում է Ագաթանգեղոս, Եզնկայ երիցու Նշանագիր կարգաց, ժամանակք հայրապետացն Հայոց, Դաշանց թուղթ, ժամանակագրութիւն Սամուէլի Անեցուց, Աշխարհագրութիւն, Անանիայի Շիրակացուց Որպիսութիւն կենացն եւլն.:

- 265ա-375ա (էջ 525-745). Բուզանդարան պատմութիւնք. Խոստաբանութիւն նախագիտելի է. [Ա]յս ինչ է ի դպրութիւնս

երրորդ պատմութեանցս... եւ սրբոյն Տրդատայ կայանք բնակութեան էր ի գաւառն Տարօնոյ զիւր եղբ (այսպէ՛ս - Գ. Տ-Վ.): Նոյն՝ 375ա երեսին շարունակում է՝ «Բուզանդ պատմագիր օրինակն մինչեւ աստ էր. անմեղադիր լերուք»: Յիշ. 375ա. «Ո՛վ սուրբ ընթերձողք, լիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զգծագրող սորին Չմիւռնացի Մարգար էրէց՝ ի վայելումն անձին իւրոյ. թվին ՌձԽԹ (1700), Յուլիսի ԺԵ (15), ի Կոստանդնուպօլիս»: Սա վերաբերում է միայն Բուզանդի հատուածին. ձեռագրի մնացեալ մասերը լիշատակարան չունեն, թուագրելի են Ժէ. դարով<sup>46</sup>:

11. Ի. Երեւանի հմր. 3079. ՌձԿԹ-ՌձՀԹ=1700-30ականներ, տեղի՝ Կ. Պոլիս, Ժողովածու: Ձեռագրացուցակում նկարագրուած է իբրեւ «Ժէ. դ. եւ 1700 թ.»՝ երկու մաս ունեցող, երկրորդ մասը Պոլսում գրուած ձեռագիր<sup>47</sup>, իրականում գրուած է եօթ տարբեր գրիչների ձեռքով եւ ունի ի մի կազմուած, սակայն՝ իրարից անկախ երեք մաս<sup>48</sup>: Ներկայացնում ենք միայն մեզ հետաքրքրող վերջինը. 20,5x15,5 հրդէփ. մեծութեան 120 թերթ (թթ. 259ա-378բ՝ խիստ եզրահատուած), երկսիւն, շղագրանման, անկանոն նոտրգիր, 33 տող: Մ իւրբանի՝ «1.K»:

Գրչի լիշատակարանը ճշգրիտ պատճէնն է նախորդ՝ Ժ օրինակի լիշատակարանի. 378ա. «Ո՛վ սուրբ ընթերձողք, լիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զգծագրող սորին Չմիւռնացի Մարգար էրէցս. ի վայելումն անձին իւրո՛յ. թվին ՌձԽԹ (1700), Յուլիսի ԺԵ (15), ի Կոստանդնուպօլիս»: Ժամանակին ուրիշների նման, մենք եւս այս լիշատակարանը վաւերական ենք դիտել, ուստի եւ Բուզանդի այս օրինակի գրչութեան ժամանակը համարել ենք 1700 թ.<sup>49</sup>: Վենետիկեան ձեռագրին ծանօթանալուց յետոյ հարկադրուած ենք սրբագրելու այս թուագրումը. թէեւ նկատելի է երկու ձեռագրի գրերի զծագրական պատկերի որոշ մերձաւորութիւն, սակայն Ժ օրինակի գիրը համեմատաբար կանոնաւոր նոտրգիր է, իսկ սրանը՝ աւելի շղագրանման, խրթին եւ դժուար ընկալելի, ուստի հակուած ենք պակաս հաւանական համարելու այն բացատրութիւնը, թէ Մարգար Չմիւռնացի գրիչը նոյն 1700 թ. կրկին օրինակած լինի իր՝ մի անգամ արդէն գրած ձեռագիրը (մեքենաբար կրկնելով առաջինի լիշատակարանի անգամ ամսաթիւը): Նկատի ունենալով, որ սրա առաջին՝ հիմնական մասը՝ թթ. 1ա-228բ (Գաւազանագիրք Մարտինոսի Օպաւացուոյ) մեզ արդէն ծանօթ Մարգիս Սահէթճի եպիսկոպոսի ձեռքով Պոլսում գրուել է 1720ին, երկրորդը՝ 229ա-258բ, նոյն Պոլսում ձեւաւորուել է 1727ի շուրջ, աւելի ճշմարտանման ենք համարում այս ենթագրութիւնը:

ձեռագրի ֆալստոս պարունակող մասը (թթ. 259ա-378բ) մի այլ ձեռքով<sup>50</sup> կարող է օրինակուած լինել 1720-30ականների շուրջ: Ըստ այսմ, որոշ իմաստով սրբագրելի է Միարանի՝ այս ձեռագրի գրչին տուած գնահատականը: Մարգար երէցը շատ տգէտ, կիսագրագէտ գրիչ է, ամէն տողում ունի վրիպակներ: Բայց այսուամենայնիւ Փալստոսի քննադատական հրատարակութեան ժամանակ անտես չէ կարելի առնել<sup>51</sup>: Այսինքն՝ իրականում Մարգար Զմիւռնացի գրիչն այնքան տգէտ կամ կիսագրագէտ չէ, որքան այս՝ ի օրինակի անանուն գրիչն է: Համեմատութիւնը հաստատեց, որ նա իսկապէս գաղափարել է Մարգար գրչի՝ ժ ձեռագրից, սակայն, վերջինիս բազմաթիւ կանտնաւոր բառեր այս ձեռագրում ստացել են հիմնովին աղաւաղ եւ անտրամաբանական տեսք:

12. Լ. Վենետիկի հմր. 1188/890. Անթուական. ըստ ամենայնի՝ ժէ դ., տեղի՝ անյայտ, Գրիչ՝ Պետրոս վարդապետ: Բուզանդարան<sup>52</sup>: 27,1x18,5 հրդչփ. մեծութեան 188(+2՝ սկ.՝ Ա-Բ) թերթ, թուղթ, երկսիւն (գրողաշտը՝ 21,5x13,1), բոլորգիր, 25 տող. գրուած մասն ունի ա-յհա՝ յետագայ էջակալում:

- 1ա-184բ Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելի - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանց... եւ սրբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր ի գաւառն Տարօնոյ շինել զիւր եղբ<sup>53</sup>:

78ա. Բարի եւ մեծանուն սուրբ հայրապետիս բարեխաւսութեամբ աւգնեա Քրիստոս Աստուած Պետրոս վարդապետիս՝ մեղապարտ գրչիս<sup>54</sup>:

Գլուխք եւ սկիզբք դպրութեանց՝ 1ա՝ Գ, 38ա՝ Դ, 122բ՝ Ե, 176ա՝ Զ:

Ինչպէս ասել ենք, մեր համեմատութեան հիման վրայ այս ձեռագիրը համարում ենք վենետիկեան առաջին, հետեւաբար՝ նաեւ յաջորդ հրատարակութիւնների հիմք:

13. Խ. Վենետիկի հմր. 1176/887. Ժէ. դ., տեղի՝ [Կ. Պոլիս, Ամիոն], Հաւաքածոյ<sup>55</sup>: 428 թերթ (բացթողումներով էջակալուած 1-858). բաղկացած է տարբեր տեսակի թղթերի վրայ, տարբեր ձեւքերի նոտրով գրուած չորս ինքնուրոյն ձեռագրից:

Ա՝ թթ. 1-193 (էջ 1-392. թուղթը ողորկ, երեք կիսալուսնի, եզերքին՝ ծաղկի եւ այլ գարդերի լուսադրոշմով). գրիչ՝ Պօղոս երէց Մարգուանեցի (156ա). պարունակում է Մեսրոպայ երիցու Վարք սրբոյն Ներսիսի, Մատթէոս Ուռհայեցի, Խորենացու Ողբ, Պատմութիւն երկոտասան առաքելոց եւն.:

Գ՝ թթ. 332-374 (էջ 667-752. լուսադրոշմը՝ սափոր, բոլորակի մէջ խաչ եւ վեցթեւ աստղ). բովանդակութիւնը՝ Թովմա Մեծոփեցի. գրչութեան թուակա՞նն է՝ 363բ. «Ի ՌԼԹ (1590) թվականիս»:

Դ՝ թթ. 375-428 (էջ 753-852. լուսադրոշմը՝ խարսխանման զարդ) ունի միայն Ներսիսի Շնորհալու թուղթ ընդհանրական. «Գրեցաւ թիւնին ՌԽԶ (1597) ամին»:

Բ մաս-ձեռագիրը Բուզանդարանն է (այստեղ այլ նիւթեր չկան)՝ թթ. 194-331 (էջ 393-666. անհարթ թուղթ, լուսադրոշմը՝ բոլորակի մէջ խաչ). գրիչ՝ Յարութիւն դպիր. նոտրգիր, գրութիւն՝ միասին, գրադաշտը 17x11,4, տող՝ 24-27:

Տախտակէ միջուկով դրոշմազարդ կաշեկազմի զարդերը ընորոշ են ԺԼ. դարին, սակայն Բուզանդարանի մասը վերաբերում է ըստ ամենայնի ԺԷ. դարին<sup>56</sup>:

- 194ա-329բ. Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելի է - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ... եւ սրբոյն Տրդատա կայեանք բնակութեան էր ի գաւառն Տարօտ շինեալ գիւր:

Սկիզբ գլխոց եւ դպրութեանց՝ 194ա՝ Խոստարանութիւն, 194բ՝ Գ, 226ա՝ Դ, 288բ՝ Ե, 325ա՝ Զ:

Թիչ՝ 226ա (Երրորդ դպրութեան վերջում) «Յիշեցէք զգծող գրչիս Յարութիւն դպրիս. լիշեալ լիցիք անմահ Որդոյն Աստուծոյ. եղիցի, եղիցի», ապա՝ 330ա. Փառք... ամէն: Գրեցաւ ||| սակաւ խրատարանս մեղաւոր եւ անարժան ոտից փոշի հող եւ մոխիր ձեռամբս ||| յայս յանուն ||| եւ զուսուցիչ իմ գտէր Միքայէլկարգ քահանայութեան հաստատ պահեսցէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որում փառք յաւիտեանս. ամէն<sup>57</sup>: Եւս առաւել սկիզբն պատճառ եղօղս յօրինակս եւ յաւրինակարանս այսմ հոգեւոր խրատական բանիս, եւ զմեզ յանդիմանէ, ուսուցանէ, դարձեալ կրկին կու խրատէ զմեզ. ապինիազ թագաւորէն կու խնդրեմ որ հանապազ»:

Յատկանշական է չ նախդրի կիրառութեան անհարթութիւններով. անհրաժեշտ տեղում չի դնում, փոխարէնն առատօրէն դնում է անհարկի տեղերում. «յաշխարհէ Հայոց» բացառականի տեղ աւելի յաճախ ունի «աշխարհէ Հայոց» անհարթութիւնը. «Արչակ արքայ Հայոց» ուղղականի տեղ ունի «յԱրչակ յարքայ Հայոց» եւլն. այսպիսի ընթերցումները եւ առատօրէն առկայ սխալ բառանջատումները քննական հրատարակութեան մէջ նշանակելի չեն: Ունի նաեւ այլ մանր լիշատակագրութիւններ, որոնք թոյլատրում են ձեռագիրս համարելու ազգակից շարքիս՝ Ամիրի միջավայրից ծագած Բ օրինակին:

14. Մ. Վենետիկի հմր. 1646/919. Ժէ. դ., տեղի՝ անյայտ. «հա-  
ւանարար Պոլիս»<sup>58</sup>, Բուզանդարան: 21,3x15,5 հրդչփ. մեծութեան  
127+7 (վջ.՝ պհպ.) թղթի թերթ, երկսին (գրադաշտը՝ 16.2x10,6),  
նոտր, 30 տող: 1ա՝ «ի գրոց անկելոց ի ձեռս Հ. Մկրտիչ վարդա-  
պետին Աւգերեան, ի Պօլիս, 1806, ՌՄՄԵ»:

- 2ա-125ա. Բուզանդարան պատմութիւնք. Խոստաբանութիւն  
նախագիտելի է - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմու-  
թեանցս... եւ սրբոյն Տրդատայ կայանք բնակութեան էր ի դա-  
ւառն Տարօնոյ շինեալ զիւր եղբարց:

Գլուխք եւ սկիզբք դպրութեանց 2ա՝ Գ, 27բ՝ Դ, 84ա՝ Ե, 120ա՝  
Զ:

15. Կ. Եղմ. հմր. 436. ՌՃՄԶ=1707 թ. տեղի՝ [Կ. Պոլիս], Եւ-  
սեբիոսի Պատմութիւն եկեղեցական, Խորենացի եւ Բուզանդարան,  
գրիչ՝ Աստուածատուր երէց Ղալաթացի, ստացող՝ Տիրացու Մա-  
ղաքիա [ձեւահիւրճեա՞ն]: 24x17 հրդչփ. մեծութեան 362 թերթ,  
երկսին, նոտրգիր, 33 տող:

- 259ա-361բ. Բուզանդարան պատմութիւնք. Խոստաբանու-  
թիւն նախագիտելի է - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատ-  
մութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ սրբոյն Տրդա-  
տայ կայեանք բնակութեան էր ի դաւառն Տարօնոյ շինեալ զիւր  
եղբ:

Գլուխք եւ սկիզբք դպրութեանց. 259բ՝ Գ, 279բ՝ Դ, 326ա՝ Ե,  
357բ՝ Զ<sup>59</sup>:

Եթէ ոչ գրչի, ապա անպայման մօտ ժամանակակցի (գուցէ՝  
ստացողի՞) ձեռքով սրբագրուած է. նոյն ձեռքով ձախ լուսանցում  
եւ սիւնակամէջերին, ըստ գլուխների, տողերը համարակալուած  
են. առաջինը՝ 1, 7րդը՝ 2, 14րդը՝ 3 եւ այսպէս շարունակ<sup>60</sup>:

16. Հ. Վենետիկի հմր. 2460/925. ՌՄԼԲ=1783 թ., Բուզանդա-  
րան. Հ. Մկրտիչ վ. Աւգերեանի կազմած գոյքամատեանում բնո-  
րոշուած է այսպէս. «Թիւ 35 թ. է., տպ[ագիր], ուղղագ[րեալ] ձե-  
ռ[ամբ] Գէորգ Տէր Յովաննիսեանի»: Յաջորդ տեղեկութիւնները  
քաղում ենք Հ. Սահակ վ. Ճեմճեմեանի վերոյիշեալ նամակից եւ  
նրա տարամադրած երկու թերթ պատճէնից. ձեռագրի մէջքին  
փակցուած թերթիկի վրայ (գուցէ՝ նոյն վարդապետի ձեռքով)  
գրուած է. «Բուզանդ, տպ. Կ. Պօլսոյ, ուղղագրեալ»: Հ. Վարդան վ.  
Հացունին այս օրինակը ժամանակին հանել է ձեռագրերի շարքից,  
փոխարէնը մուծելով մի Բժշկարան, աւելի ուշ Հ. Սերովբէ վ. Ա-

գլխանը նոր՝ 2460 համարի ներքոյ կրկին մուծել է ձեռագրատուն: Կազմի Ա. փեղկից յետոյ դրուած թերթի երկրորդ երեսին նոյն Աւգերեան վարդապետի ձեռքով գրուած է. «Չայս Բուզանդ ուղղադրեալ ի միոյ ձեռագրէ, առաքեաց տիրացու Գէորգն Տէր Թօհաննիսեան, յամի 1783, ի սեպտ»: Նոյն թերթի վերին կէսին, երեւի արդէն Գէորգ Պալատեցու ձեռքով, անկասկած իր համեմատած օրինակից առնելով, գրուած է Սամուէլ Անեցուց քաղուած մուտքը. «Իւրանքաչիւր ոք ի կորովաբան եւ լիմաստախոհ արանց», որ մեզ ծանօթ է Երեւանի հմր. 4584ից եւ հմր. 1482ից (վերջը՝ մի փոքր փոխուած): Սա էլ նշանակում է, որ Պալատեցին Պոլսի տըպագիրը համեմատել է այս երկու ձեռագրից մէկի կամ նրանց հետ կապ ունեցող մի այլ օրինակի հետ: Այս հանգամանքը միաժամանակ իրաւունք է տալիս Պալատեցու բաղդատած օրինակը պայմանականօրէն թուագրելու լիշեալ ձեռագրերի ժամանակով՝ 1668-78 թթ., այլեւ՝ աւելի վստահօրէն տեղորոշելու եւ համարելու՝ ծագած Ամիր-Տիգրանակերտի միջավայրից<sup>61</sup>:

17. 2. Վիեննայի հմր. 819. ՌՅԱ=1852թ., Բուզանդարան: Սա վենետիկի Ա՝ 1832թ. տպագիրն է, որ «Առաքեաց ի Կ. Պոլսոյ վ. Հ. Պօղոս Թովնանեանց. 1852, ուղղեալ ըստ հին անթուական ձեռագրի», որ բոլորգիր է եղել:

- էջ 1-272. Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելի է - Այս ինքն է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ սրբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր ի դաւառն Տարօնոյ շինեալ զիւր. ամէն:

«Համեմատութիւններէն կը տեսնուի, որ բնագրական եւ պատմական բաւական շատ տարբերութիւններ (գլխակարգութիւնք կը պակսին) կան վենետիկեան 1832ի տպագրութեան եւ նկատի առնուած բոլորգիր անթուական ձեռագրին միջեւ»<sup>62</sup>: Համեմատուած ձեռագրի գրիչը Ստեփանոսն է. Դ. դպր. ժգ. գլխի վերջում ունեցել է. «աւգնեա Քրիստոս Աստուած մեղապարտ գըրչիս Ստեփանոսի եւ ողորմեա աւուրն դատաստանի»: Համոզուած ենք, որ այդ օրինակը եղել է Արմաշի վանքի հմր. 37 ներկայ չարքի Էք ձեռագիրը, որից նոյն Թովնանեանը նոյն 1852ին Պոլսում օրինակել եւ Վիեննա է ուղարկել Վիեննայի մատենադարանի հմր. 236 ձեռագիրը (Միքայէլ Ասորի)<sup>63</sup>. վերջինիս գաղափար օրինակը պարունակել է նաեւ Բուզանդարան. Թովնանեան վարդապետը նախընտրել է առաջինն արտագրել, երկրորդը՝ բաղդատել իր ունեցած տպագրի հետ:

Առ այս կան թուացեալ հակասութիւններ. առաջինն այն է, որ հմր. 236ում Բուզանդարանի գրիչ Ստեփանոսի մասին խօսք չկայ: Ներկայ բաղդատեալ օրինակում էլ չկայ հմր. 236ի ունեցած գաղափար օրինակի գլխաւոր լիշատակարանի մնացորդը, ըստ որի ձեռագիրն Ամիրում գրուել է «ի դպրատանն Մինաս գրչի, ձեռամբ աշակերտացն իմոց»: Բայց այս դէպքում եւս կրկնուած է ներկայ շարքի Բ՝ Երեւանի հմր. 1867 ձեռագրի կարգը. գլխաւոր լիշատակարանում ասուած է. «գրեցաւ... ձեռամբ սարկաւագացն Ամիրչին եւ Յովանիսին, որ սկիզբն առնէին գրչութեան եւ ուսանէին առ ոտս տէր Մինաս գրչի», իսկ շարադրանքի մէջ՝ գլուխներէց մէկի վերջում նոյն Ստեփանոսը խնդրում է լիչել իրեն. «լիչեա... գգրիչս Ստեփանոս»: Երկրորդ հակասութիւնը՝ այս օրինակի գաղափարը համարուած է բոլորգիր, իսկ Արմաշի ձեռագիրը նոսր էր, լուծելի է նրանով, որ բոլորգիր էին վերջինիս խորագրերը: Միաժամանակ, Վիեննայի այս բաղդատեալ օրինակի եւ մեր շարքի Բ օրինակի ձեռագրի ընթերցումները հիմնականում նոյնական են:

18. Ղ. Վիեննայի հմր. 762. 1910-1911 թթ., Բուզանդարան, կարին, գրիչ՝ Հ. Քերովբէ վ. Յովանեան, ստացող՝ Մխիթ. միաբ. Վիեննայի: 25,5x20,5 հրդչփ. մեծութեան 158 թերթ, թուղթ, միասիւն (գրադաշտը՝ 22,5x16), շղագիր, 26 տող: Օրինակուած է կարնոյ Արծնեան վարժարանի հմր. 55 (շարքիս՝ Կա) ձեռագրից, ուրեմն եւ, նրա թուագրման համաձայն, ներկայացնում է ԺԶ.-ԺԷ. դդ. ձեռագրի պատկերը:

- 2ա-156բ. Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելիք - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ զայն արձակեաց: Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն: Ապա այլն թէ ոչ կամօք աղէբողոն արկեալ (Զ, ր.՝ տպ. վեն., 1933, էջ 271, տ. 1վ.):

Սկիզբք գլխոց եւ դպրութեանց. 2բ՝ Գ, 38 ա՝ Դ, 107բ՝ Ե, 152ա՝ Զ<sup>64</sup>:

#### ԹԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

19. ձ՝ Երեւանի հմր. 6321. ՌՉԳ=1624 թ., Ժողովածու, գրիչ՝ Գրիգոր, 26,5x20 հրդչփ. մեծութեան 61 թերթ, երկսիւն, նոսրգիր, 33 տող<sup>65</sup>: Միաբանի՝ «8.N»: Նախապէս լրիւ ունեցել է Միքայէլ Ասորու ժամանակագրութիւնը, Բուզանդարան եւ Պատմութիւն Աղեքսանդրի (տե՛ս 11բ). մնացել է առաջինի վերջը, իսկ երկրորդից՝ մինչեւ Դ դպրութեան ծա գլխի սկիզբը (Բուզանդի

հատուածը նախապէս եղել է 85 թերթ. ընկած է մօտաւորապէս 35ը). այսպէս՝

- 12ա-61ա. Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելի է - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ համակ սրով եւ սուսերօք եւ ի սլաքս եւ տէգս նիզակաց զքրտունս երեսաց մերոց ջնջեցաք: Եւ III (հմմտ. տպ. Վենետիկ, 1933, էջ 168, տող 5վ.):

Բուզանդարանը գրել սկսել է՝ «ի թուին ՌՉԳ (1624) Յուլիս ամսոյ ի ԻՅ (25) սկսանի Բուզանդայ գրել. օրհնեայ ինձ Հոգիդ սուրբ Աստուած» (12ա). սա գրչի՝ մինչ այժմ յայտնի միակ լիշատակագրութիւնն է. երկրորդը գտանք ձեռագրի համեմատութեան ընթացքում. 46բ1՝ «Բարի եւ մեծանուն սուրբ հայրապետիս բարեխօսութեամբ օգնեայ Քրիստոս Աստուած Գրիգոր գրչիս, եւ ողորմեա յաւուրն դատաստանին. եւ մի անտես առներ քան զի գինք արեան քո եմք»: Շուրջ մէկ դար անց՝ ՌՃՀԱ 1722 թ. Ստեփաննոս վ. Ագուլեցին այն նուիրել է Մաղարդայ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքին (11բ), իսկ երկու տարի անց՝ «Ես Մելքոն էրէցս Հին Զուղայեցի գտի արդեօք հիմնարկութիւնն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային ըստ վկայելոյն Միխայելեան գրքիս՝ ի ձորակն Շամբոյ Ներքնոյ, ընդ որս եւ հայի ի Գողթան գաւառ, մերձ ի Մաղարդ, ի յեզր Երասխ գետոյն. ՌՃՀԳ (1724) թվ. Հոգտեմբեր ԻԴ (24) օրն» (8բ-9ա՝ ստ. լուսանցում): Ձեռագրի գրչութեան վայրն անյայտ է, սակայն սկզբնաթերթի (12ա) ձեւաւորումով, «Բուզանդարան» բառի Բ թուչնագիր գլխագրով նմանուած է Բ՝ Երեւանի հմբ. 1867՝ Ամիրդում գրուած ձեռագրին:

20. Մ. Երեւանի Հմբ 6554. ԺԸ. դ. 22x16,5 հրդչփ. մեծութեան 50 թերթ, թուղթ, երկսիւն, նտորգիր, 21 տող:

- 1ա-50բ. Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելի է - Այս ինչ է... եւ հանդերձեաց կազմեաց թագաւորն Յունաց զկանայս թագաւորին Պարսից մեծաւ պատուով եւ զամենայն գերու IIII (Գ, իա՝ տպ. Վենետիկ, 1933, էջ 68, տ. 2ն՝ ունի ամբողջ Գ դպրութիւնը՝ բացի վերջին երկու տողից)<sup>66</sup>:

21. Յ. Վիեննայի հմբ. 967. ԺԸ. դ., Բուզանդարան, գրիչ, եւ ըն՝ անյայտ: 16,5x11 հրդչփ. մեծութեան 165 թերթ, թուղթ, միասիւն (գրադաշտը՝ 12,5x7) շղագիր, 22 տող:

Բուզանդարան պատմութիւնք - Այս ինչ է դպրութիւն երրորդ պատմութեանց ժամանակագիր կանոնք մատենից... իսկ իբրեւ երեկոյ եղեւ՝ ժամ ընթրեաց թագաւորին Պարսից քանզի սո-

վորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ի նորուն տախտին արկանել բազմական, օրէնք էին զի թագաւորն Պարսից եւ թագաւորն Հայոց ի ||| (Դ, ծղ՝ տպ. Վենետիկ, 1933, էջ 174, տ. 10ն.):

«Դարձեալ շատ մը մասեր համառօտուած են. եղած հրատարակութիւններուն հետ լիապէս չի համընթանար: Վերջաւորութեանը բաւական թուով դատարկ թուղթ ձգած է. գուցէ ընագրին արտագրութեան շարունակութեանը համար, սակայն այդ տեղի չէ ունեցած»<sup>67</sup>:

### ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ<sup>68</sup>

22. Ն. Երեւանի հմր. 2748. ՌՉԳ=1624 թ., Ժողովածու, տեղի՝ Տարօն, գրիչը՝ տարբեր, ստացող եւ սրբագրող՝ Մարտիրոս վ. առաջնորդ Մշոյ Ս. Կարապետի: 27,5x21 հրդչփ. մեծութեան 359 թերթ, երկսիւն, նոտրգիր, 30-33տող: Բազմարտվանդակ եւ լաւ ժողովածու է (358ա՝ 1671 թ. ստացել է Վարդան Բաղիշեցին), բայց ունի Բուզանդարանի միայն խոստաբանութիւնը<sup>69</sup>:

- 132բ. Յառաջարան պատմագրոց Փոստոսի, որ է Բուզանդ - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... առ ի զաւգուտն ժառանգել որք միանգամ կամին սրտի մտաւք հասու լինել սմին, զոր ասելոցս եմ խոստումն:

23. Ե. Երեւանի հմր 1862. ՌՂ=1641 թ., Ժողովածու, տեղի՝ Նոր Զուղա՞, գրիչ՝ Ըռամանոս, ստացող՝ Սահակ վ. Զուղայեցի: 20x14 հրդչփ. մեծութեան 265 թերթ, նոտրգիր, 30 տող: Միաբանի՝ «7.R»: Ունի Մովսէս Խորենացի, Եղիշէ, մասն Բուզանդարանի, Քարոզք Տաթեւացու եւ Որոտնեցու, Վասն Լոշտակի: Գրչի լիշտակարանները<sup>70</sup> (65ա, 135ա, 145ա, 163բ) տալիս են հետեւեալը. 1641ին Ըռամանոս գրիչը ձեռագիրս գրել է Սահակ վարդապետ Զուղայեցու համար. սա էր «աշակերտեալ եւ ուսեալ ի գիրս աստուածային եւ կարգ առեալ հրեշտակաց ի ձեռն ըրբունի եւ քաջ արհի Խաչատուր վարդապետէ» (163բ): Վերջինս, անկասկած, Մովսէս Տաթեւացու նշանաւոր աշակերտը եւ Նոր Զուղայի առաջնորդն է. ստացողի «Զուղայեցի» մականուն-ծննդավայրի անընդհատ շեշտումը մտածել է տալիս, որ ձեռագիրը, գուցէ, գըրւել է ո՛չ Նոր Զուղայում:

Ձեռագիրս ամբողջական է՝ առանց ընկած մասերի կամ թերթերի. նախապէս (ո՞ւմ) արած ընտրութեամբ, առանց դպրութեան կամ գլխահամարների նշելու: Գրուած է Բուզանդարանի 20 գլուխ

(Գ. Ժդ, Զ. Ժգ, Դ. Է-Ժ, Ե. Իե-Իը, Լե-Խդ, Զ. ա), որոնց օրինակումը լետագայում դարձել է աւանդույթ: Այս հատուածների քաղում-մէկտեղումն ինքնին մատենագրական հետաքրքիր եւ հետազօտման արժանի երեւոյթ է, այդ պատճառով եւ մանրամասն ներկայացնում ենք աւանդույթը կրող ժամանակագրորէն առաջին այս ձեռագիրը:

- 164ա-184բ. Ի Բուզանդրեան պատմութենէ

1. Գ Ժդ. 164ա. Յաղագս վարուց եւ գործոց մեծին Դանիէլի առ Աստուծոյ...
2. Զ Ժգ. 167ա. Յաղագս Գընգայ սրբոյ եւ առաքինոյ, որ էր գլխաւոր լայնմ...
3. Դ է. 167բ. Յաղագս սքանչելեացն Աստուծոյ, որ եղեն ի Ներսէս կամ ի Բասիլիոս...
4. Դ ը. 168բ. Յաղագս թէ որպէս կայսրն Վաղէս հալածեաց...
5. Դ թ. 170ա. Յաղագս թէ որպէս արարին զերանելին Բասիլիոս եպիսկոպոսն...
6. Դ ժ. Թէ զիարդ կոչեաց կայսրն Վաղէս...
7. Ե է. Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Հայոց...
8. Ե Իե. Յաղագս տեսլեան որ երեւեցաւ արանցն սրբոց անապատաւորաց...
9. Ե Իգ. Յաղագս սրբոյն Շաղիտայի...
10. Ե Իէ. Յաղագս սրբոյն Եպիփանու...
11. Ե Իը. Յաղագս մեծամեծ նշանացն եւ սքանչելացն... ի Մամբրէ...
12. Ե Լէ. Յաղագս գալոյն Մանուէլի ի գերութենէն Պարսից...
13. Ե Լը. Յաղագս թէ զիարդ... Մանուէլ... ձեռն ետ ի թագաւորն Պարսից...
14. Ե Լթ. Յաղագս Գումանդ Շապուհն...
15. Ե Խ. Յաղագս Վարագայ...
16. Ե Խա. Յաղագս Մուկանայ...
17. Ե Խբ. Յաղագս խաղաղութեան ամս է...
18. Ե Խգ. Յաղագս Մերութանայ Արծրունոյ, որ հանդերձ եկն ի վերայ Մանուէլի...
19. Ե Խդ. Յաղագս թէ զիարդ թագաւորեցոյց Մանուէլ զմանուկն Արշակ...
20. Զ ա. Յաղագս ընդ երկու բաժանելոյ աշխարհին Հայոց...

Վերջին գլխի աւարտին անմիջապէս յարում է: «Աստի վայր զՄովսիսի Պատմագրէն՝ յերրորդ հատորէն գի'տ, ի քառասներորդէն յերկրորդէն կարգաւ. աւրհնեալ է Աստուած յամենայն ժամ»։ այսինքն՝ պատմութեան շարունակութիւնն իմանալ ցանկացողին առաջարկում է կարդալ Խորենացու Գ գրքի խք. գլուխը:

24. Ո. Երեւանի հմր. 7029. ՌՃԳ=1654 թ., ժողովածու, տեղի՝ Կ. Պոլիս, գրիչ Յովհաննէս դպիր, ստացող՝ Թամուր Ակնցի: 15x10 հրդչփ. մեծութեան 204 թերթ, միասիւն, նոտրգիր, 16 տող:

Ունի Բուզանդարանի միայն Ե դպրութեան լզ-խդ գլուխները (94ա-119բ):

Զեռագրացուցակում մեզ հետաքրքրող մասը բնորոշուած է. «Ի պատմութենէն Փաւստոսի Բուզանդացու», իսկ իրականում է՝ 1ա-119բ. [Մեսրոպայ երիցու] «Պատմութիւն սրբոյն Ներսէսի հայրապետին Հայոց»<sup>71</sup>: Վերջին մասում նրա ուշ՝ ընդարձակուած, տարբերակների կարգով բերում է Բուզանդի Ե լե գլխից քաղուած՝

91ա-4ա. «Վասն քաջին Մուշեղայ մահուն՝ զօրավարին Հայոց եւ Վրացի թագաւորէն Վարազդատայ» գլուխը, ապա հենց այստեղից շեղում է Մեսրոպ երէցի գործի կարգից (հմմտ. Երեւանի ձո. 6047, 80բ, տ. 3վ.) եւ թէ՛ խորագրերի, թէ՛ շարադրանքի որոշ ազատ վերարտադրութեամբ ներկայացնում Բուզանդարանի Ե լզ-խդ գլուխները (7029, 94ա-119բ), որ առաւելապէս արժէք ունի Մեսրոպ երէցի գործի գրական պատմութեան համար, իսկ Բուզանդարանի բնագրի կազմութեան ժամանակ կարող է օգտագործուել խիստ զգուշութեամբ:

25. Զ. Երեւանի հմր. 3965. 1624ից յետոյ-1684ից առաջ, ժողովածու, տեղի՝ Կամենից եւ Պոլիս, գրիչ Ներսէս դպրապետ, ստացող՝ Եփրեմ պատրիարք Պոլսոյ (1684 թթ.): 19x16 հրդչփ. մեծութեան 116 թերթ, միասիւն, նոտրգիր, 25-31 տող: Միաբանի՝ «լրութեան համար... 2»: Ունի՝ Սամուէլ Անեցի, Մասն Աստուածաբանութեան Ալբերտի, Պողոսէոսի Աշխարհացոյց, եւ այլ մանունք<sup>72</sup>, որոնց շարքում.

- 112բ-4ա. «Յաղագս Յովհաննու եպիսկոպոսի եւ վարուց նորա...», որ Բուզանդարանի Զ դպրութեան ը-ժ՝ տխրահամբաւ Յովհան եպիսկոպոսին նուիրուած երեք գլուխն է:

26. Պ. Երեւանի հմր. 4351+8813+6714. ՌՃԼԵ=1688 թ.<sup>73</sup>, ժողովածու, տեղի՝ [Նոր Զուղա]<sup>74</sup>, ստացողք՝ նախ Մնացական Զու-

դայեցի, ապա՝ Յովհաննէս, յետոյ՝ Եսայի Հասան-Ջալալեան կաթողիկոսը Աղուանից: 20,5x15 հրդչփ. մեծութեան 186+26+97=309 թերթ, թուղթ, միասին, նոտրգիր, 32, 33 եւ 26-27 տող: Միարանի՝ «2.ԱԴ.»:

Պարունակում է Խորենացի (4351, 1գ-105բ), Եղիշէ (4351, 105բ-8813, 1ա), Ի Բուզանդարանէ (8813, 1ա-26բ), Մասն պատմութեան մեծին Ներսիսի՝ Մեսրոպայ երիցու (Տեսիլ մեծին Ներսիսի, Յաղագս պեղծ Նեոին յայտնելոյ՝ 6714, 1ա-13բ) եւ Պատմութիւն Վարդանայ Արեւելցու (6714, 14ա-97բ): Տփի կազմութեամբ (Խորենացի, Եղիշէ, Ի Բուզանդէ) եւ այլ նշաններով նման է Սահակ Զուղայեցու օրինակին (Շ՝ Երեւանի հմբ. 1862) եւ գուցէ հենց նրանից էլ օրինակուել է: Պարունակում է նրա իսկ ունեցած գլուխները:

- 8813, 1ա-26բ. «Ի Բուզանդրեան պատմութենէ»՝ Գ ժդ, Զ ժգ, Դ է-ժ, Ե է, Իե-իը, լէ-լոդ, Զ ա<sup>75</sup>:

27. Զ. Երեւանի հմբ. 8344 ժէ. դ., Ժողովածու, գրիչ Աստուածատուր երէց. ստացող՝ Աղէքսանդր վարդապետ [Զուղայեցի՝ ապագայ կաթողիկոսը]: 15,5x10,8 հրդչփ. մեծութեան 165 թերթ, թուղթ, երկսին, նոտրգիր, 20 տող<sup>76</sup>: Ունի Մեսրոպ երէցի Պատմութիւն Ներսիսի մեծի, ԿԶ գլուխ Պատմութեան Օրբեյանի, իսկ դրանցից առաջ.

- 1ա-47ա. «Ի Բուզանդրեան պատմութենէ». 20 գլուխ՝ Նոր Զուղայից ծագող միւս ձեռագրերի կարգով. Գ ժդ, Զ ժգ, Դ է-ժ, Ե է, Իե-իը, լէ-լոդ, Զ ա: Վերջում ունի Շ օրինակից յայտնի աւարտը. «Եւ աստի վայր զՄովսիսի Պատմագրէն՝ յերրորդ հատորէն գի՛տ, ի քառասներորդէն յերկրորդէն կարգաւ», որից եւ նկարագրողն ընկել է թիւրիմացութեան մէջ. «Ի պատմութենէ Փաւստոսի Բուզանդի (վերագրեալ Մովսիսի Խորենացու)»<sup>77</sup>:

27ա Զա. Լոնդոն, Վելլքոմ հաստատութիւն (Wellcome Institute) հ. 6. 1693 թ., Ժողովածու, գրիչ՝ Աղէքսանդր [Զուղայեցի<sup>78</sup>], ստացող՝ մահդասի խոջա Աւետիք: Կաշեկազմ, 228 թերթ, թուղթ, 16x10 հրդչփ., միասին, նոտրգիր, 20 տող<sup>78</sup>:

- 222բ-227ա. «Վարք անկարգ կաթողիկոսաց. Ի Բուզանդէական վիպագրութեամբ» եւ պարունակում է վերջինիս Զ դպրութեան բ-դ, ը-ժ գլուխները՝ Զաւէնի, Շահակի, Ասպուրակէսի եւ համբաւաւոր Յոհանն Եպիսկոպոսի մասին:

28. Ռ. Երեւանի հմր. 1785, 1700 թ., Ժողովածու, տեղի՝ [Նոր Զուղա]<sup>79</sup>, գրիչ՝ Տէր Աստուածատուր, ստացող Աղէքսանդր վ. [Զուղայեցի, Նոր Զուղայի առաջնորդ, ապագայ կաթողիկոսը]: 21,2x15 հրդչփ. մեծութեան 283 թերթ, թուղթ, միասին, նոտորգիր, 19 տող: Ունեցած նիւթերը Բուզանդարանի աւանդութի հետ կապ չունեն, արդիւնք են ստացողի ճաշակի եւ պէտքերի, ուստի չենք ներկայացնում:

- 204ա-207բ. «Վարք անկարգ կաթողիկոսաց ի Բուզանդեան վիպագրութենէ» եւ պարունակում է վերջինիս 2 դպրութեան բ-դ, Ը-ժ գլուխները՝ Զաւէնի, Շահակի, Ասպուրակէսի եւ համբաւաւոր Յոհան եպիսկոպոսի մասին: Օրինակութիւնն ազատ է՝ բնագրի կազմութեան ժամանակ պէտք է զգուշ լինել. միւս կողմից՝ Բուզանդարանի գրական պատմութեան աւանդութի համար ուշագրաւ է թէ՛ քաղուածքի խորագիրը եւ թէ՛ բովանդակութիւնը<sup>80</sup>:

29. Ս. Երեւանի հմր. 6096, 1701 թ., Ժողովածու, տեղի՝ [Նոր Զուղա]<sup>81</sup>, ստացող՝ Աղէքսանդր վ. [Զուղայեցի՝ ապագայ կաթողիկոսը]: 15x10 հրդչփ. մեծութեան 247 թերթ, միասին, նոտորգիր, 18 տող: Ունի՝ Պատմութիւն Վարուց Յովհաննու Ոսկերբեանի, Առաքելի Սիւնեցոյ Գովեստ ի Ս. Աստուածածինն, Վասն միաբանութեան Հայոց եւ ձեռնադրութեան կաթողիկոսի եւ՝

- 242ա-ճա. Վասն անկարգ կաթողիկոսաց ի Բուզանդեան վիպագրութենէ:

Սա նախորդ (Ռ) ձեռագրի նման եւ նրա կարգով 2 դպր. բ-դ եւ Ը-ժ գլուխներն է. իսկ այս փաստն արդէն մտածել է տալիս, որ գուցէ այդ ընտրութեան հեղինակը հենց ստացող Աղէքսանդր վարդապետն է: Հենց նա էլ գրչութիւնից անմիջապէս յետոյ ձեռագիրը նուիրել է՝ «Առ մեծարգոյ եւ գերապատիւ եղբայրն իմ Յոհան վարդապետն լիշատակի նուաստ Տէր Աղէքսանդր վարդապետէ, ի թուին ՌԾ (1701) եւ յամսեանն Յունիսի երկոտասան» (4ա): 1751 Յունիսին ձեռագիրը պատկանում էր ոմն հանգուցեալ Յովհաննէս Դանիէլեան Մալիլովի այրի Եթարին (246բ), իսկ մէկ դար անց էր՝ «Գրչագիր ի մատենից գրադարանի Աւետիքայ Մկրտչեան Էնֆիաճեանց, ի 1855 ամի, ի Տփլիս» (4ա)<sup>82</sup>:

**ՃԱՌՇՆՏՐԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ**<sup>83</sup>

30. Վ. Երեւանի հմր. 1522, ձառընտիր Յովհաննավանքի: Միաբանի՝ «հնագոյն խմբի» Ա. նոյն հեղինակը, մեր վկայակոչած յղուածից բացի, այս յաջորդ՝ Տ ձեռագրերին նուիրել է մի այլ

օգտաշատ ուսումնասիրութիւն<sup>84</sup> եւս, որի մէջ ի թիւս այլ (երբեմն վիճայարոյց) եզրակացութիւնների, մեր կարծիքով ձեռագրերը թուագրել եւ ընորոշել է բաւական ճշգրիտ: Այս ձեռագրին վերաբերող մեր մի յօդուածում<sup>85</sup> էլ ճշգրտուել են նրա գրչութեան որոշ հանգամանքներ: Պարզուածի ուրուպատկերը հետեւեալն է. ժամանակ՝ 1165-1185 թթ. միջեւ, առաւել մօտաւոր 1180 թուականի շուրջ, տեղի՝ Յովհաննավանք (Արագածոտն), գրիչ՝ Յովհաննէս քհչ., ստացող՝ Ռուբէն կուսակրօն քահանայ՝ ուսուցիչ Յովհաննավանքի դպրոցի: 52,3x33 հրղչփ. մեծութեան՝ լաթի 570 թերթ, երկսիւն (մէկը՝ 38,5x19), անցման (արեւելեան) բոլորգիր, 37-42 տող:

Քանի որ Միաբանի դիպուկ ընորոշմամբ՝ այս երկու ձեռագրերը «տարբեր խմբերի ներկայացուցիչներ են, նման, բայց ո՛չ նոյն բովանդակութեամբ. կան վարքեր եւ ճառեր, որ գտնուում են մէկում եւ պակասում են միւսում»<sup>86</sup>, ուստի նախընտրում ենք, կրկին Միաբանին<sup>87</sup> հետեւելով, երկուսի բովանդակութիւնը ներկայացնել միասնաբար՝ երկրորդի գրչութեան եւ արտաքին հանգամանքների պատկերումից յետոյ:

Ունեցած նիւթերի կարգում խՊ հերթական համարի տակ բերել է Գ բ-գ, ժա, ե-գ, ժբ, ժդ, Ե իզ-իէ. ապա՝ խԴ համարի ներքոյ՝ մի խորագրով, իբրեւ մի նիւթ՝ Դ ծգ-ծէ գլուխները, որոնք բրնուում են ձեռագրի 272բ-282բ թերթերը: Շատ ուշագրաւ է թէ՛ ընտրութիւնը եւ թէ՛ համարակալման այս ձեւն ինքնին:

31. Տ. Երեւանի հմբ. 3777. 1185-8 թթ.<sup>88</sup>, Սաղմոսավանքի ձառընտիր, տեղի՝ Սաղմոսավանք, գրիչ, կազմող, ստացող՝ Մարկոս եւ Մխիթար եղբարք: 53x33 հրղչփ. մեծութեան 480 թղթի թերթ, Միաբանի՝ «հնագոյն խմբի» Ե:

- 364բ-372բ էջերում ունի Գ բ-գ, ժա, ե-գ, ժբ, ժդ, ապա՝ կրկին իբրեւ մի նիւթ՝ Դ ծգ-ծէ գլուխները, այսինքն՝ նախորդի ունեցածից պակասում են Ե իզ-իէ գլուխները:

Վ եւ Տ օրինակների պարունակած փաւստոսեան հատուածների ընդհանուր պատկերը հետեւեալն է<sup>89</sup>:

1. Գ բ. Վ 272բ. Տ 364բ. Վասն մեծի քահանայապետին Գրիգորի Հայոց Լուսաւորիչի եւ սրբոյն Արիստակիսի որդւոյ նորին, եւ նոցին շիրմացն - Արդ, ի թագաւորութեան Տրդատայ...

2. Գ գ. Վ 272բ-3բ, Տ 364բ-5բ. Յաղագս Վրթանայ մեծի քահանայապետի որդւոյ Գրիգորի - Ապա յետ այսորիկ թագաւորեաց խոսրով Կոտակ...

3. Գ ժա. վ 273բ-5ա, Տ 365բ-7ա. Յաղագս մեծի պատերազմին Պարսից եւ Հալոց ընդ միմեանս եւ անկանելոյ ի պատերազմին զաւրավարին վաչէի եւ մահուան խոսրովա արքաի, եւ փոխելոյ յաշխարհէս մեծ հայրապետն Վրթանէս - եւ լետ այսորիկ յաւել եւս լինել մարտ...

4. Գ ե. վ 275բ-6ա, Տ 367բ-8ա. Վասն որդւոցն Վըրթանա, որոց անուանք առաջ նոյն Գրիգորիս եւ երկրորդին Յուսիկ - Այս Վրթանէս եւ Արիստակէս որդիք մեծ քահանայապետին...

5. Գ զ. վ 276բ-7ա, Տ 368ա. Յաղագս սրբոյ հայրապետին Գրիգորիսի վախճանին - Այլ վասն Գրիգորիս եպիսկոպոսի որդւոյ Վրթանիսի...

6. Գ ժբ. վ 277ա-8ա, Տ 368բ-70ա. Յաղագս թագաւորելոյ Տիրանայ լետ հաւր իւրոյ, եւ թէ որպէս Յուսիկն լետ հաւր իւրոյ Վրթանա կալաւ զաթոռ հայրապետութեանն, եւ թէ որպէս սպանաւ ի Տիրանայ յարքայէ յաղագս յանդիմանութեան - եւ յանցանելն յաշխարհէ թագաւորին խոսրովու...

7. Գ ժդ. վ 278ա-81ա, Տ 370ա-2բ. Յաղագս վարուց եւ գործոց մեծին Դանիելի քահանաի առն Աստուծոյ, եւ թէ որպէս յանդիմանեաց զթագաւորն Տիրան եւ կամ որպէս պատուհասեալ մեռաւ ի նմանէ - Բայց յայնժամ դեռեւս կենդանի էր ծերունին սուրբ...

8. Ե իգ. վ 281աբ, Տ չունի. Յաղագս Շաղիտաի աշակերտի նորին - Շաղիտայս այս սուրբ...

9. Ե իէ. վ 281բ-2ա, Տ չունի. Յաղագս Եպիփանու - Երանելի սուրբն Եպիփան ընկեր էր սրբոյն Շաղիտաի...

10. Դ ծգ եւ ծէ. վ 282աբ, Տ 372բ. Վկայութիւն Զուրթա երիցու յերկիրն Պարսից որ էր յԱրտաշատ քաղաքէ - Ապա իբրեւ չոգան տարան յերկիրն Պարսից...

32. Բ. Փարիզի Ազգային գրադարանի Հճր 178. ԺԲ. դ., տեղի՝ անյայտ, Տօնական, գրիչ՝ Պաւղոս: 51x32,5 հրդչփ. մեծութեան՝ յաթի 643 թերթ, հաստ բամբակէ թուղթ, երկսիւն (մէկը՝ 41,5x11), ընտիր երկաթագիր, 42 տող<sup>90</sup>: Ունի միայն Դ, է՝

- 148բ. Յաղագս սքանչելեացն, որ եղեն ի Ներսէս եւ ի Բասիղիոս եւ վասն նախանձուն Եւսեբի առ Բասիղիոս - Իսկ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս յորժամ ետես զարմանալիսն զնախ իջանելն աղաւնոյն յերկնից...

33. Յ. Վենետիկի հմր. 17/200. Ճառընտիր Ա, ՈՀԳ=1224 թ., 50x30 հրդչփ. մեծութեան 564 թղթէ թերթ, երկաթագիր, 41 տող. գրիչ՝ Թաղէոս կրօնաւոր, ծաղկող՝ Ղազար վ. եւ Վարդան, վայր՝ Վանք կամ անապատ՝ Գերեզման Ս. Լուսաւորիչի (տեղը<sup>91</sup>), ստացող՝ Կոստանդին վանահայր Ս. Լուսաւորիչի անապատ-գերեզմանի<sup>91</sup>: Պարունակում է միայն Գ դպրութեան ե եւ զ գլուխները. այսպէս՝ - 118բ1-120ա1. Պատմութիւն որդոցն Վրթանիսի, որոց անուանքն են այս. առաջնոյն Գրիգորիս եւ երկրորդին Յուսիկ - Այս Վրթանէս եւ Արիստակէս որդիք էին մեծի քահանայապետին սրբոյն Գրիգորի... եւ ամ յամէ աշխարհաժողով ժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ, զսորա զաւր տաւնեն զյիշատակ քաջութեանն եւ ցնծան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն<sup>92</sup>:

34. ի. Վենետիկի հմր. 1014/201. Ճառընտիր Բ, ԺԲ.-ԺԳ. դդ., տեղի եւ այլ տեղեկութիւնք՝ անյայտ. 33,4x24,5 հրդչփ. մեծութեան 496 թերթ, 33 տող. գրիչք՝ Հայրուկ, Սարգիս, Վարդան, Մերունի եւ Աւետիս<sup>93</sup>: Ա ճառընտրի նման ունի Գ դպրութեան ե եւ զ, նաեւ Ե դպրութեան իդ<sup>94</sup> գլուխները. այսպէս՝

- 202բ2-203բ2. Պատմութիւն վասն որդւոցն Վրթանայ, որոց անուանքն են. այս առաջնոյն Գրիգորիս, երկրորդն Յուսիկ - Այս Առիստակէս եւ Վրթանէս որդիք էին մեծի քահանայապետին Գրիգորի... եւ զամենայն աւուրս կենաց իւրոց գոհանայր եւեթ յամենայն ժամ անդադար:

- 203բ2-204բ1. Յաղագս սրբոյն Գրիգորիսի վախճանին - Այլ վասն Գրիգորիսի՝ որդւոյ Վրթանայ, եղբաւրն Յուսիկան... եւ ամ յամէ աշխարհաժողով ժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ, զսորա զաւր տաւնեն զյիշատակ քաջութեանն եւ ցնծան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն<sup>95</sup>:

- 29բ1-36ա1. Յաղագս վախճանի սուրբ քահանայապետին Ներսիսի եւ թէ որպէս յաղագս յանդիմանելոյ նորա զՊապ արքայն Հայոց՝ եւ մեռանի ի ձեռաց նորա մահու դեղաւք. իսկ թագաւորն Պապ ամաւթայի ախտիւն արուական... եւ զՍուրբ Հոգին հակից եւ փառակից Հաւր եւ որդւոյ յաւիտեանս յաւիտենից ամէն<sup>96</sup>:

35. Փ. Վենետիկի հմր. 1554/205. Ճառընտիր Զ, ԺԲ. դ.՝ 1114ից քիչ անց, տեղի՝ հաւանաբար Մաշկեւորի վանք: 26,5x17,5 հրդչփ. մեծութեան 216 թերթ, 22-24 տող, ստացող՝ Մաշկեւորի վանահայր Դաւիթ<sup>97</sup>: Ա ճառընտրի նման ունի միայն Գ դպրութեան ե եւ զ գլուխները՝ այսպէս՝

- 141բ-144ա. Պատմութիւն սրբոց հայրապետացն Հայոց Առիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն եւ Գրիգորի - Այս Առիստակէս եւ Վրթանէս որդիք էին մեծի քահանայապետին Գրիգորի... եւ զամենայն աւուրս կենաց իւրոց գոհանայր եւեթ յամենայն ժամ անդադար զՏեառնէ Աստուծոյ:

- 144ա-146ա. Յաղագս սրբոյն Գրիգորիս ի վախճանին - Այլ վասն Գրիգորիսի Եպիսկոպոսի՝ որդւոյ Վրթանայ, եղբաւրն Յուսկան... եւ ցնծային ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն<sup>98</sup>:

36. Ք. Երեւանի հմբ. 6196. 1227 թ.<sup>99</sup>, տեղի՝ Խլա՞թ, Խորճի անապատ, ձառընտիր, գրիչ՝ Ներսէս, ստացող՝ Վարդան վ.: 50x33 հրղչփ. մեծութեան 612 թղթի թերթ, երկսիւն, բոլորգիր, էջում 38-39 տող:

- 149բ-150բ. Պատմութիւն վասն որդւոցն Վրթանայ, որոց անուանքն են այս՝ առաջնոյն Գրիգորիս եւ երկրորդին Յուսիկ - Այս Վրթանէս եւ Արիստակէս որդիք էին մեծի քահանայապետին սրբոյն Գրիգորի...

- 150բ-151բ. Յաղագս Գրիգորիսի վախճանին - Այս վասն Գրիգորիսի Եպիսկոպոսի որդւոյ Վրթանայ...

37. Օ. Եղմ. հմբ. 97. ՉՀէ=1328 թ. տեղի՝ Սկեռա անապատ, ձառընտիր (Վարք սրբոց՝ Վկայարանք), գրիչ՝ Յովհաննէս որդի Սարգսի, 31x24 հրղչփ. մեծութեան 796 թղթի էջ (398 թերթ), երկսիւն, բոլորգիր, 30 տող:

- էջ 224բ. Պատմութիւն վասն որդւոցն Վրթանայ, որոց անուանքն առաջնոյն Գրիգորիս եւ երկրորդին Յուսիկ - Այս Վրթանէս եւ Արիստակէս որդիք էին մեծ քահանայապետին Գրիգորի...

- 227բ. Յաղագս Գրիգորիսի վախճանին - Այս վասն Գրիգորիսի Եպիսկոպոսի որդւոյ Վրթանայ...<sup>100</sup>:

38. Ֆ. Վենետիկի հմբ. 512/202. 1637 թ., տեղի՝ Երուսաղէմ, ձառընտիր Գ., գրիչ՝ Մկրտիչ Ղազարեանց, ստացող՝ Զաքարիա քհչ. Իլովիցի<sup>101</sup>: 28,8x20,5 հրղչփ. մեծութեան 650 թերթ, 32 տող: Կրկին պարունակում է Գ դպրութեան ե եւ զ գլուխները այսպէս՝

- 640բ-641բ. Պատմութիւն վասն որդւոցն Վրթանայ, որոց անուանքն առաջնոյն Գրիգորիս եւ երկրորդին Յուսիկ - Այս Վրթանէս եւ Արիստակէս որդիք էին քահանայապետին Գրիգորի... եւ զամենայն աւուրս կենաց իւրոց գոհանայր եւեթ յամենայն ժամ անդադար փառաւորելով զԱստուած յաւիտեանս յաւիտենից. ամէն:

- 641ա-642ա. Յաղագս Գրիգորիսի վախճանին - Այլ վան Գրիգորիսի Եպիսկոպոսի՝ որդւոյ Վրթանայ... եւ ամ յամէ աշխարհաժողով ժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանց այնոցիկ, զաւր տանին լիշատակ քաջութեան, եւ ցնծան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս<sup>102</sup>:

**ՅԱՅՍՄԱՒՈՒՐԱՅԻՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ<sup>103</sup>**

39. Կա. Վիեննայի հմր. 7. 1439 թ., տեղի՝ Եկեղեաց եւ Դարանաղեաց գաւառ, ի վանս Աւագ (Երզնկա), Յայսմաւուրք, գրիչ՝ Սիմոն արդլ., ծաղկող՝ Նաղաշ Քարիմ, ստացող՝ Մովսէս քհն.:

- 367ա. Արաց Իէ, Փետր. Գ. Վարք սրբոյն Շաղիտայի եւ Եպիփանն՝ աշակերտաց մեծին Դանիէլի - Սոքա աշակերտք էին Դանիէլի քորեպիսկոպոսի... »<sup>104</sup>: Բուզանդարանի Ե դպր. իզ-իէ գլուխների յայսմաւուրային միակցումն է:

40. Կբ. Օքսֆորդի հմր. 30՝ Ms. Marsh 438 (I-III). 1482 թ., տեղի՝ անյայտ, Յայսմաւուրք:

- 283ա. Արաց 27, Փետր. 3. [Վարք սրբոյն Եպիփանու եւ Շաղիտայ]:

- 284ա. Արաց 27, Փետր. 3. [Վկայաբանութիւն Զուլիթայ երիցու]<sup>105</sup>:

Նոյն Ե, իզ-իէ եւ Դ, ծգ հատուածների վերաշարադրանքն է:

41. Կգ. Վիեննայի հմր. 10. ԺԶ. դ., տեղի՝ անյայտ, Յայսմաւուրք, գրիչ՝ Յակոբ երէց (օգնականք՝ Մարգարէ, Պողոս):

- 296բ. Վարք եւ լիշատակ Եպիփանու եւ Շաղիտայ եւ այլ սրբոցն - Սոքա աշակերտք էին սրբոյն Դանիէլի...

- 297բ. Յայսմ աւուր Վկայաբանութիւն Զըւատայ քահանայի - Արքայն Պարսից Շապուհ գերեաց զաշխարհս Հայոց...

Կրկին՝ Ե, իզ-իէ եւ Դ ծգ (Զըւատայ=Զուլիթայ) գլուխների վերաշարադրանքն է՝ «տեղ տեղ բառ առ բառ»<sup>106</sup>:

42. Կդ. Վիեննայի հմր. 128. ԺԵ.-ԺԶ. դդ., տեղի՝ անյայտ, Վարք Հարանց, գրիչ, ստացող՝ Պետրոս եւ Կարապետ:

- 123բ-124ա. Սուրբ հարցն աւանդութեանն յաղագս մարմնոյ եւ արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի - Արք երկու աշակերտք սրբոյն Դանիէլի՝ աշակերտի սրբոյն Գրիգորի, կրանաւորեալ ի յանապատս... անուն միոյն Եղիտեա՝ ազգաւ ասորի, եւ միւսոյն Եպիփան՝ ազգաւ յուն...:

Կրկին վերաշարադրանքն է (Եղիտեա՝Շաղիտա) Բուզանդարանի Ե, իր գլխի. «ուրիշ խմբագրութեամբ, բայց արժանի ուշագրութեան»<sup>107</sup>:

43. Կե. Վիեննայի հմր. 79. ԺԹ. դ., «Հատընտիր հաւաքումն բանից»՝ գրաբար սովորելու համար հիմնականում տպագիրներից օրինակուած մի տեսակ Գրաբարի ծաղկաքաղ, որ ունի. 4ա «Բուզանդ (Զուրիթայ մասը)»<sup>108</sup>. Միաբանի՝ «լրութեան համար... 1»<sup>109</sup>:

#### ԿՈՐՈՒՍԵԱԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ<sup>110</sup>

44. Կա. Կարին, Արծնեան վարժարանի հմր. 55. ԺԶ.-ԺԷ. դդ.<sup>111</sup>, տեղի՝ [Մշո՞ւ] Մ. Կարապետ. Միքայէլ Ասորի եւ Բուզանդարան, գրիչ՝ Սարգիս, ստացող՝ Տէր Համազասպ: 34x25 հրդչփ. մեծութեան 331 թերթ (չհամարակալած), թուղթ, միօրինակ բոլորգիր, 24-25 տող: Միաբանի՝ «10S»<sup>112</sup>:

- 184ա-331բ.<sup>113</sup> Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելի - Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... եւ զայն արձակեաց: Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն: Ապա այրն թէ ոչ կամօք աղէրողոն արկեալ (Զ, Ը., տե՛ս՝ տպ. Վենետիկ, 1933, էջ 271, տ. 1վ.)<sup>114</sup>:

45. Կբ. Արմաշի վանքի հմր. 37. 1607-1638 թթ. միջեւ, տեղի՝ Ամիթ. Միքայէլ Ասորի եւ Բուզանդարան, գրիչք՝ [Ստեփանոս] եւ աշակերտք Մինաս գրչի: 21x15 հրդչփ. մեծութեան 335 թերթ, թուղթ, երկսիւն (մէկը՝ 16,5x4,5), նոտրգիր, խորագրերը՝ բոլորգիր, 27 տող, գծանկար խորան՝ 183ա. Բուզանդարանի սկզբում: Միաբանի՝ «6. Arm.»:

4ա. Յանկ Միխայէլ գրոց. Ա-ԻԴ, ԻԵ. Յաղագս Բուզանդայ Հայոց պատմութեան: 5ա-182բ. ժամանակագրութիւն Միքայէլի Ասորույ:

- 183ա-335բ. Բուզանդարան պատմութիւնք. Խոստարանութիւն նախագիտելի է - Այս ինքն է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից... (վերջնատողը չի բերել):

Սկիզբք գլխոց եւ դպրութեանց. 185ա՝ Գ, 220բ՝ Դ, 294ա՝ Ե, 330ա՝ Զ:

Եիչ. 335բ. «Փառք... գրեցաւ Միխայիլս եւ Բուզանդարանս ի դպրատանն նուաստ Մինաս գրչի, ձեռամբ աշակերտացն իմոց, ի

դուռն Ս. Կիրակոսի եւ մօրն նորա Յուզիտայի, ի մայրաքաղաքս Ամիթ, յառաջնորդութեան Տէր Բարսեղ աստուածաբան վարդապետին... լիչեսջիք զմեղուցեալ նուաստ Մինաս գրիչս...<sup>115</sup>»:

Սրանից օրինակուած՝ Վիեննայի հմր. 819ում Ստեփանոս գրչի անուան առկայութիւնը թոյլ է տալիս մտածելու, որ ձեռագիրս նման է մեր շարքի Բ օրինակին (Երեւանի հմր. 1867), գրուել է նրա գրութեան թուականի՝ 1622ի շուրջ եւ ծագում է նոյն գաղափար օրինակից, ըստ այդմ՝ պէտք չէ անվերապահ ընդունել Յակոբ Թօփճեանի դիտողութիւնը, թէ՛ «նման տպագրին, որուն ընթերցումները աւելի մաքուր եւ ճիշդ են, քան գրչագրինը»:

46. Կգ. Չնքուշ, Սիրահայեաց Ս. Աստուածածին վանք. «16. Բիւզանդ Փոստոս պատմագիր. փոքր դիրքով, մաքուր գրով, թերի»<sup>116</sup>:

\*\*\*

Այսպիսով, այստեղ ներկայացրինք Փաւստոսի Պատմութիւնը պարունակող 47 ձեռագիր. 18ը ամբողջական, 3ը՝ թերի, 3ը՝ կորուսեալ (ընդամէնը՝ 24. ամբողջի կէսից աւելին). միջանկեալ դիրք ունեցող՝ առանձին դիտելի խումբ են հաստուածական օրինակութիւնները՝ 9 միաւոր. կրկին առանձին, բայց այլ աւանդութիւնների կրող ու արտայայտիչ են ճառընտրային 9ը եւ յայտարարային 5ը (ընդամէնը՝ 14): Աւելորդ չհամարելով, մի հայեացքով ընդգրկելի դարձնելու համար, կարճ ընտրուածներով պատկերենք բոլոր ձեռագրերի ամփոփ ցանկը.

#### ԱՄԲՈՂՋԱԿԱՆ

1. Ա. Եղմ. հմր. 341. ՌԽԸ=1599 թ., Բաղէշ, Պատմագիրք, գրիչ՝ Մարտիրոս, ստացող՝ Ազարիա կթղ. Ստոյ:

2. Բ. Երեւանի հմր. 1867. 1622 թ., Ամիդ, Պատմագիրք, գրիչք՝ Ստեփանոս, Ամիրչահ, Յովհաննէս սրկ.՝ աշակերտք Մինաս գրչի:

3. Գ. Եղմ. հմր. 307. 1624 թ., տեղի՝ անյայտ, Միքայէլ Ասորի եւ Բուզանդարան, ստացող՝ Կարապետ վ.:

4. Դ. Եղմ. հմր. 303. 1649 թ., տեղի՝ Կ. Պոլիս, Միքայէլ Ասորի եւ Բուզանդարան, գրիչ՝ Յարութիւն դպիր, ստացող՝ Յակոբ դպիր. գրուել է Եուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի համար:

5. Ե. Եղմ. հմր. 1553. 1649 թ., տեղի՝ Բաղէշ, Պատմագիրք, գրիչ եւ ստացող՝ Դաւիթ արեղայ Բաղիշեցի՝ որդի Աղէքսանոսի:

6. Ձ. Երեւանի հմր. 3071. 1657 թ., տեղի՝ Յովհաննավանք եւ Յուշոյ վանք, Ժողովածու, գրիչ եւ ստացող՝ Զաքարիա դպիր Քանաքեռցի:

7. Է. Երեւանի հմր. 4584. 1668 թ., տեղի՝ Տիգրան(ակերտ), Պատմագիրք, գրիչ՝ Աբրահամ երէց, ստացողը՝ խոջայ Աւետիս-Ղարաղաչ եւ խոջայ Սահակ Ամթեցիներ:

8. Ը. Երեւանի հմր. 1482. 1678 թ., տեղի՝ Ալիփուղար գիւղ, Պատմագիրք, գրիչը՝ Գրիգոր, Թումա, ստացող՝ Մինաս Համթեցի:

9. Թ. Եղմ. 230. 1679 թ., տեղի՝ Երուսաղէմ, Պատմագիրք, գրիչ եւ ստացող՝ Սարգիս եպս. Եւդոկիացի (Սահէթճի):

10. Ժ. Վենետիկի հմր. 721/915. 1700 թ., տեղի՝ Կ. Պոլիս, Բուզանդ, գրիչ եւ ստացող՝ Մարգար երէց Զմիւռնացի:

11. Ի. Երեւանի հմր. 3079. 1720-30ականներ, տեղի՝ Կ. Պոլիս, Բուզանդ:

12. Լ. Վենետիկի հմր. 1188/890. ԺԷ. դ., տեղի՝ անյայտ, Բուզանդ:

13. Խ. Վենետիկ հմր. 1176/887. ԺԷ. դ., տեղի՝ Կ. Պոլիս կամ Ամիդ(°), Հաւաքածոյ, գրիչ՝ Յարութիւն դպիր՝ աշակերտ Միքայէլ երիցու:

14. Մ. Վենետիկի հմր. 1646/919. ԺԷ. դ., տեղի՝ անյայտ, Բուզանդարան:

15. Կ. Եղմ. հմր. 436. 1707 թ., տեղի՝ [Կ. Պոլիս], Պատմագիրք, գրիչ՝ Աստուածատուր երէց Ղալաթացի, ստացող՝ Տիրացու Մաղաքիա (ձեւահիրճեա՞ն):

16. Հ. Վենետիկի հմր. 2640/925. 1783 թ., տեղի՝ Կ. Պոլիս, (Ամիդում 1668-78 թթ. շուրջ գրուած օրինակի հետ բաղդատուած տպագիր), Բուզանդ:

17. Զ. Վիեննայի հմր. 819. 1852 թ., տեղի՝ Կ. Պոլիս, (1607-38 թթ. Ամիդում գրուած ձեռագրի հետ բաղդատուած տպագիր), Բուզանդ:

18. Զ. Վիեննայի հմր. 762. 1910-1 թ., տեղի՝ Կարին (Գաղափարը՝ ԺԶ.-ԺԷ. դդ. [Մշո՞ւ] Ս. Կարապետում Տէր Համազասպի համար Սարգիս գրչի գրած ձեռագիր), Բուզանդ:

#### ԹԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

19. Ճ. Երեւանի հմր. 6321. 1624 թ., տեղի՝ անյայտ (ձեւաւորումով մօտ է Բաղէչ Ամիդի ձեռագրերին), Ժողովածու:

20. Մ. Երեւանի հմր. 6554. ԺԸ դ., տեղի՝ անյայտ, Բուզանդ:

21. Ծ. Երեւանի հմր. 967. ԺԸ. դ., տեղի՝ անյայտ, Բուզանդ:

**ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ**

22. Ն. Երեւանի հմր. 2748. 1624 թ., տեղի՝ Տարօն, ժողովածու, գրիչը՝ տարբեր, ստացող եւ սրբագրող՝ Մարտիրոս վ. առաջնորդ Մշոյ Ս. կարապետի:

23. Շ. Երեւանի հմր. 1682. 1641 թ., տեղի՝ Նոր Զուղա, ժողովածու, գրիչը՝ Ըռամանոս, ստացող՝ Սահակ վ. Զուղայեցի:

24. Ռ. Երեւանի հմր. 7092. 1654 թ., տեղի՝ Կ. Պոլիս, ժողովածու, գրիչ Յովհաննէս դպիր, ստացող՝ Թումա Ակնցի:

25. Զ. Երեւանի հմր. 3965. 1624-1684 թթ. միջեւ, տեղի՝ Կամենից եւ Պոլիս, ժողովածու, գրիչ՝ Ներսէս դպրապետ, ստացող՝ Եփրեմ պատրիարք Պոլսոյ (1684 թ.):

26. Պ. Երեւանի հմր. 4351+8813+6714. 1688թ. տեղի՝ [Նոր Զուղա], ժողովածու, ստացողը՝ նախ Մնացական Զուղայեցի, ապա՝ Յովհաննէս, յետոյ՝ Եսայի Հասան-Չալաբեան կաթողիկոսը Աղուանից:

27. Զ. Երեւանի հմր. 8344. Ժ. դ., տեղի՝ [Նոր Զուղա], ժողովածու, գրիչ Աստուածատուր երէց, ստացող՝ Աղէքսանդր վարդապետ [Զուղայեցի՝ ապագայ կաթողիկոսը]:

27ա. Զա. Լոնդոն, Վելքոմ հաստատութիւն (Wellcome Institute) հ. 6. 1693 թ., ժողովածու, գրիչ՝ Աղէքսանդր [Զուղայեցի], ստացող՝ մահաւոր խոջա Աւետիք:

28. Ռ. Երեւանի հմր. 1785. 1700 թ., տեղի՝ [Նոր Զուղա], ժողովածու, գրիչ՝ Տէր Աստուածատուր, ստացող Աղէքսանդր վ. [Զուղայեցի՝ ապագայ կաթողիկոսը]:

29. Ս. Երեւանի հմր. 6096. 1701 թ., տեղի՝ [Նոր Զուղա], ժողովածու, ստացող՝ Աղէքսանդր վ. [Զուղայեցի՝ ապագայ կաթողիկոսը]:

**ՃԱՌԸՆՏՐԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ**

30. Վ. Երեւանի հմր. 1522. Ճառընտիր Յովհաննավանքի, 1180 թուականի շուրջ, տեղի՝ Յովհաննավանք, գրիչ՝ Յովհաննէս քհն., ստացող՝ Ռուբէն կուսակրօն քահանայ:

31. Տ. Երեւանի հմր. 3777. Սաղմոսավանքի Ճառընտիր, 1185-8 թթ. տեղի՝ Սաղմոսավանք, գրիչ, կազմող, ստացող՝ Մարկոս եւ Մխիթար եղբարք:

32. Բ. Փարիզի Ազգային գրադարանի հին հմր. 88. ԺԲ. դ., տեղի՝ անյայտ, գրիչ՝ Պօղոս:

33. Ե. Վենետիկի հմր. 17/200. Ճառընտիր Ա, 1224 թ., տեղի՝ Վանք կամ անապատ՝ Գերեզման Ս. Լուսաւորչի, գրիչ՝ Թադէոս

կրօնաւոր, ծաղկող՝ Ղազար վ. եւ Վարդան, ստացող՝ Կոստանդին վանահայր Ս. Լուսաւորչի անապատ-գերեզմանի:

34. Ի. Վենետիկի հմր. 1014/201. Ճառընտիր Բ, ԺԲ.-ԺԳ. դդ., 33,4x24,5 հրդշփ. մեծութեան 496 թերթ, 33 տող. գրիչք՝ Հայրուկ, Սարգիս, Վարդան, Մերուէնի եւ Աւետիս, տեղի եւ այլ տեղեկութիւնք՝ անյայտ:

35. Փ. Վենետիկի հմր. 1554/205. Ճառընտիր Զ, ԺԲ դ.՝ 1114ից քիչ անց, տեղի՝ հաւանաբար Մաշկեւորի վանք, ստացող՝ Մաշկեւորի վանահայր Դաւիթ:

36. Ք. Երեւանի հմր. 6196. 1227 թ. Ճառընտիր, տեղի՝ Խլաթ, Խորձի անապատ, գրիչ՝ Ներսէս, ստացող՝ Վարդան վ.:

37. Օ. Եղմ. հմր. 97. ԶՀԷ=1328 թ. Ճառընտիր (Վարք սրբոց՝ Վկայաբանք), տեղի՝ Սկեւոս անապատ, գրիչ՝ Յովհաննէս որդի Սարգսի:

38. Ֆ. Վենետիկի հմր. 512/202. Ճառընտիր Գ., 1637 թ., տեղի՝ Երուսաղէմ, գրիչ՝ Մկրտիչ Ղազարեանց, ստացող՝ Զաքարիա քհն. Իլովցի:

#### **ՅԱՅՍՄԱՌՈՒՐԱՅԻՆ ՀԱՏՈՒԱՄՆԵՐ**

39. Կա. Վիեննայի հմր. 7. 1439 թ., Յայսմաւուրք, գրիչ՝ Սիմոն արղլ., ծաղկող՝ Նաղաշ Քարիմ, տեղի՝ Եկեղեաց եւ Դարանաղեաց գաւառ, ի վանս Աւագ (Երզնկա), ստացող՝ Մովսէս քհն.:

40. Կր. Օքսֆորդի 30՝ Ms. Marsh 438 (I-III) 1482 թ., տեղի՝ անյայտ, Յայսմաւուրք:

41. Կգ. Վիեննայի հմր. 10. ԺԶ. դ., Յայսմաւուրք, գրիչ՝ Յակոբ երէց (օգնականք՝ Մարգարէ, Պողոս):

42. Կդ. Վիեննայի հմր. 128. ԺԵ.-ԺԶ. դդ., Վարք Հարանց, գրիչ, ստացող՝ Պետրոս եւ Կարապետ:

43. Կե. Վիեննայի հմր. 79. ԺԹ. դ., «Հատընտիր հաւաքումն բանից»:

#### **ԿՈՐՈՒՍԵԱԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ**

44. Կա. Կարին, Արծնեան վարժարանի հմր. 55. ԺԶ.-ԺԷ. դդ., Միքայէլ Ասորի եւ Բուզանդարան, գրիչ՝ Սարգիս, ստացող՝ Տէր Համազասպ, տեղի՝ [Մշո՞ւ] Ս. Կարապետ:

45. Կբ. Արմաշի վանքի հմր. 37. 1607-1638 թթ., տեղի՝ Ամիթ. Միքայէլ Ասորի եւ Բուզանդարան, գրիչք՝ [Ստեփանոս] եւ աշակերտք Մինաս գրչի:

46. Կգ. Չնքուչ, Սիրահայեաց Ս. Աստուածածին վանք. թուական եւ տեղի՝ անյայտ, Բուզանդ:

Ամփոփենք՝ նախ ճշգրտելով ամբողջական, թերի եւ չպահպանուած (ժամանակին բնագրի լիակատար արուած օրինակումների) ձեռագրերի մեր հաշիւը. 2՝ Վիեննայի հմր. 819ը վերարտադրութիւնն է Կբ. Արմաշի, իսկ 2՝ Վիեննայի հմր. 762ը՝ Կա, իմա՝ Արծնեան վարժարանի օրինակների, որ նշանակում է, թէ ձեռագրերի այս խմբի իրական քանակը 22 է: Այսուհետեւ, անհետ՝ վերարտադրութիւն չունեցող կորսուած Չնքուշի Կգն նկատի ունենալով, կրկին արձանագրենք, որ գիտական հրատարակութեան համար քննելի ամբողջական ձեռագրերի քանակը 18 է, թերիները՝ 3:

Սրանց գրչութեան վայրերի եւ նրանց ստեղծմանը մասնակցած մարդկանց վերաբերող տեղեկութիւնների ամբողջութիւնը հաստատում է դեռեւս Միաբանի նկատած այն իրողութիւնը, որ Փաւստոսի մեզ հասած ձեռագրերի մի մասի համար պարտական ենք Ամիգ-Տիգրանակերտի միջավայրին: Միաժամանակ, մեր իմացութիւններն ընդլայնում եւ հնարաւոր են դարձնում վստահօրէն եզրակացնելու, որ Փաւստոսի մեզ հասած բոլոր ձեռագրերի նախօրինակը կամ նախօրինակները պահպանուել են Բաղէշ-Ամիգի վանական կենտրոններում եւ Ղուկաս Կեղեցու, Սրապիոն Ուռհայեցու ու Բարսեղ Արծրունեցու գլխաւորած դպրոցների ու գրչութեան աշխուժ կենտրոնների գործունէութեան շնորհիւ բազմացուելով, տարածուել միւս օջախներում: Այսպէս, Բաղէշում են գրուել մեր շարքի Ա եւ Ե, Ամիգում՝ Բ, է, Ը<sup>117</sup>, Խ եւ Կբ ձեռագրերը: Այս միջավայրի հետ եկեղեցական-մշակութային սերտ կապեր ունեցած Տարօնում են գրուել Ն հատուածական եւ Արծնեան վարժարանի Կա ամբողջական ձեռագրերը: Երուսաղէմում գըրւած Թ ձեռագիրը եւս ծագում է նոյն միջավայրից, քանզի նրա գրիչ Սարգիս եպս. Սահէթճի Եւդոկիացին Մինաս Ամղեցու աշակերտն էր: Պոլսում գրուած օրինակները եւս (Դ, Ժ, Ի, Կ, Զ) ծագում են Բաղէշ-Ամիգից: Անկասկած, մի օր նորովի, նոր հայեացքով պէտք է ուսումնասիրուեն Ամիգի ԺԶ. դ. վերջի-ԺԷ. դ. ուսումնագիտական եւ գրչութեան արդիւնաշատ դպրոցն ու նրա արտադրանքը<sup>118</sup>, պարզուեն բոլոր այն աղբիւրները (նրանց շարքում նաեւ Փաւստոսի Պատմութիւնը), որոնք փրկուելով մեզ են հասել հենց այդ դպրոցի շնորհիւ:

Ամիգը վաճառաշահ քաղաք էր՝ մէկը Պարսկաստան-Պոլիս առեւտրական ուղու կարեւոր հանգուցակէտերից<sup>119</sup>: Հին Զուղայի եւ ընդհանրապէս Նախիջեւանի գաւառի, հետեւապէս եւ Նոր Զուղայի առեւտրականներն աշխուժ գործունէութիւն էին ծաւալել նաեւ

այստեղ: Այս ճանապարհով եւ նրանց ջանքերով էլ բազում այլ աղբիւրների հետ միասին Բուզանդարանի առաջին օրինակները եկել են Արեւելեան Հայաստան: Շարքիս Բ ձեռագիրը գրուելուց 15 տարի անց՝ 1637 թ. յայտնուել է Նախիջեւանի գաւառի Շոռոթ գիւղաքաղաքում. այս փաստն էլ իրաւունք է տալիս ենթադրելու, որ այնտեղից ելած օրինակի պատճէնում պէտք է համարել նաեւ Արեւելեան Հայաստանում գրուած հնագոյն օրինակը (Ձ), նաեւ Նոր Զուղայում եւ նրա մշակութային ոլորտում գրուած հատուածական օրինակները: Սրանց շարքում նկատելի է Բուզանդի 20 գլուխ պարունակող քաղումը (Շ, Պ, Ձ), ապա՝ ամենայն հաւանականութեամբ Աղեքսանդր Զուղայեցի կաթողիկոսի նախաձեռնութեամբ քաղուած «Վարք անկարգ կաթողիկոսաց» հատուածումը (Ձա, Ռ, Ս): Տարօնում գրուած Ն օրինակի մէջ միայն «Խոստարանութեան» օրինակման հանգամանքը բացատրելի է այդ ձեռագրի տեղեկատու նիւթեր ամփոփելու նպատակադրմամբ: Ո օրինակի փաւստոսեան հատուածները դրսեւորումն են այն իրողութեան, որ Բուզանդի Պատմութիւնը յետագայ դարերում շարունակում էր պարբերաբար ազդել եւ վերստին հարստացնել Ժ. դարում հիմնականում իրենից բանաքաղուած՝ Մեսրոպ Վայոցձորեցու՝ Ներսէս Մեծի վարքը: Իսկ Չն՝ նշանաւոր Յովհաննէս եպիսկոպոսին վերաբերող իր քաղուածքով մի տեսակ կանխել է գրաբարի մերօրեայ դասագրքերին եւ, գրաբար սերտելու նիւթ լինելու հետ միաժամանակ, ծառայել ցոփ հոգեւորականութեան այլանումի նպատակին: Ընդհանրապէս՝ գուցէ կարելի է մտածել, որ հատուածական օրինակութիւնները Բուզանդի երկի որոշակի նպատակներով կիրառում-գործածութեան դրսեւորումներ են:

Կրկին կիրառական նպատակադրումով ստեղծուած լինելով հանդերձ, բոլորովին տարբեր նկարագիր ունեն ճառընտրային եւ յայսմաւուրային օրինակները. այս կարգի ձեռագրերի մեր թուարկումը լիակատար՝ լինել չի կարող, քանի որ ձեռագրացուցակների մէջ նրանց նկարագրութիւնները յաճախ անկատար են եւ ունեն միայն «ճառընտիր» կամ «Յայսմաւուրք» ընդհանուր անունները. սրանցով են բնորոշուած նաեւ Երեւանի Մատենադարանի նոյնպիսի հարիւրաւոր ընտիր ժողովածուներ: Այս պատճառներով էլ Միաբանի յօդուածից եւ վեներտիկեան Դ. տպագրից յայտնի օրինակներին այստեղ գումարուած յաւելումները պարզուել են այլ նպատակներով արուած մեր փնտռութիւն ընթացքում: Իսկ սա նշանակում է, որ Բուզանդի հատուածներ պարունակող այդպիսի ժողովածուների կատարեալ ցանկի պատրաստումը կարող է լինել միայն տեւական ու մանրակրկիտ աշխատանքով: Մի-

այն դրանից յետոյ է հնարաւոր լինելու այդպիսի ձեռագրերի աւանդութի յատկեցումը, որ, իր հերթին, նպաստելու է նոյն ժողովածունների պատմութեան խնդիրների լուսաբանմանը: Միաժամանակ արձանագրելի է, որ բնագրի կազմութեան ժամանակ այս կարգի ձեռագրերին պէտք է վերաբերուել վերապահութեամբ, քանզի սրանք հիմնականում պարզ վերարտադրութիւն-օրինակութիւններ չեն. նախատեսուել են այլ՝ ձառնարկի եւ Յայսմաւուրք ժողովածունների ծիսական նպատակին ծառայեցնելու համար, ուստի եւ երբեմն վերարտադրուել են համեմատաբար ազատ եղանակով:

Արդէն ասել ենք՝ Բուզանդարանի բնագրի բազմադաւաղ լինելու փաստը շատ է արժարժուել մեր բանասիրութեան մէջ, որ, ինչպէս յայտնի է, ժամանակին զինուած էր գերքննադատութեան մանրադիտակով եւ ամէն ինչ համարում էր հիմնաւորապէս սրբագրելի ու խմբագրելի. վենետիկեան առաջին հրատարակութեան օրերից իսկ աղբիւրիս ձեռագրերը համարուեցին իրար նման՝ նոյն հիմքից ծագող եւ հաւասարաչափ աղաւաղուած. ձեռագրական ոչ հարուստ նիւթի հիման վրայ այդ տպաւորութիւնը թանձրացրեց նաեւ Միաբանը. «Ուշադիր բաղդատութիւնը համոզեց ինձ, որ այս ձեռագրերը կը տան որոշ մանրմունք սրբագրութիւններ, բայց ընդհանրապէս բոլորն էլ պատկանում են տպագրերին ծառայած ձեռագրերի խմբին, լինելով հանդերձ նրանից հնագոյն եւ ընտիր»<sup>120</sup>: Սրանից յետոյ գոյութիւն ունեցող ձեռագրերն արժանացան մի տեսակ քամահրանքի եւ Բուզանդարանի բնագրի ճշգրտմ-ճշգրտման գաղափարն սկսեց յենուել արտաքին հանգամանքների՝ այլ աղբիւրների, ընդհանրապէս պատմագիտական եւ քերականագիտական իմացութիւնների ու գիտելիքների վրայ: 1960ականներին Վախթանգ Գէորգեանը ցոյց է տուել, որ Փաւստոսի «ձեռագրերը դեռեւս շատ բան կարող են տալ ուսումնասիրողներին»<sup>121</sup>, այսինքն՝ տպագիրների սխալ ձեւերի փոխարէն յաճախ ունեն ճիշդ՝ նախընտրելի ընթերցումներ. մենք էլ նկատել ենք, որ Հ. Արսէն Բագրատունու, Նորայր Բիւզանդացու, Հրաչեա Աճառեանի կամ Հ. Գ. Նահապետեանի սրամիտ կռահում-սրբագրութեան առաջարկներից շատերը հաստատուում են ձեռագրերի աւանդած ընթերցումներով: Իսկ սա մի անգամ եւս ապացուցում է, որ արտաքին միջոցները Փաւստոսի բնագրի քննութեան համար պէտք է կիրառուել միայն հենց իր ներքին՝ բոլոր ամբողջական եւ հատուածական ձեռագիր օրինակների հնարաւորութիւնների սպառումից՝ բոլորի նիւթը թէկուզ տարրնթերցումների

ձեւով պատմագիտութեան եւ բանասիրութեան տրամադրութեան տակ դնելուց չեսող: Այս յօդուածի հիմնական նպատակն էլ համարում ենք այդ անելիքի անհրաժեշտութեան ցուցադրումը եւ կառելի չափով նոյն անելիքի դիւրացմանը նպաստելը:

### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Փաւստոս Բուզանդ, *Հայոց պատմութիւն*. Թարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթագրութիւններ ակադեմիկոս Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1947, էջ 5: Ոճական բազմազանութեան համար ներկայ շարադրանքի մէջ զուգահեռ դործածում ենք «Փաւստոս», «Բուզանդ» կամ «Բուզանդարան» ձեւերը՝ միշտ նկատի ունենալով նոյն Փաւստոս Բուզանդ հեղինակին եւ նրա *Պատմութիւն Հայոց* կամ *Բուզանդարան պատմութիւնք* երկը:
- <sup>2</sup> Երեւելի լինելու էր «Պատմագիրք Հայոց» շարքի մի գիրքը. Մալխասեանցի մասնակի աշխատակցութեամբ ընտրելը կազմելու էր հենց ինքը. առանձին ակնարկներէց յստակ երեւում է, որ յօդուածը շարադրելուց առաջ, նա արդէն համեմատել էր իրեն հասու ձեռագրերը, սակայն Երեւանի Մատենադարանում պահպանուող նրա դիւանում այդ համեմատութիւններն այսօր չկան. տե՛ս՝ Գալուստ Տէր-Մկրտչեան, *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, հ. Ա, Երեւան, 1979, էջ 508:
- <sup>3</sup> Մի այլ ընտրի կարիքի թեւադրանքով ժամանակին Մաշտոցեան Մատենադարանը ստացել էր Փաւստոսի ամէնահին՝ Երուսաղէմի Սրբ. Յակոբեանց մատենադարանի հմր. 341 ձեռագրի ժապաւէնը՝ այլ վայրերի ձեռագրերի ժապաւէնների հաւաքածու, հմր. 408: Եւրոպայի մէջ ընդհանրապէս կիրառել ենք հետեւեալ միջանի ընդունուած համառօտագրութիւնները.՝ Եղմ.՝Երուսաղէմ, հմր.՝համար(=թիւ), հրդչի.՝հարիւրերորդաչափ (=սանտիմետր), ՄՄ=Մաշտոցեան Մատենադարան:
- <sup>4</sup> Մինչ այդ նաեւ շարադրել էինք մատենաշարի առաջին գրքի մէջ արդէն տպուած հրատարակչական առաջարանը. տե՛ս՝ «Հրատարակչութեան կողմից».- կորիւն, *Վարք Մերոց Մաշտոցի*, Երեւան, 1994, էջ 3-5:
- <sup>5</sup> Բոլորի մատենադարանեան համարները նշանակել ենք համապատասխան ձեռագրերին վերաբերող ծանօթութիւնների մէջ:
- <sup>6</sup> Գ. Տէր-Մկրտչեան, «Փաւստոսի ձեռագրերը», *Հանդէս հայագիտական, Մարբուրգ*, 1904, Բ. պրակ (Zeitschrift für armenische Philologie, Band II, Heft IV, Marburg, 1904), էջ 267-86. նաեւ՝ Գ. Տէր-Մկրտչեան, էջ 352-7. օգտագործում ենք երկրորդը, որ հեղինակի ինքնազրով ուղղուած, լրացուած եւ օժտուած է Պիոն Յակոբեանի հմտալից ծանօթութիւններով (Գ. Տէր-Մկրտչեան, էջ 508-10): Մեր նկարագրութիւնների մէջ, առանց լրացուցիչ լղումների, նշանակել ենք Միաբանի իմացած բոլոր ձեռագրերի հերթական համարներն ու պայմանանիշերը, որոնք յօդուածիս թուարկման կարգով միասեղ նշանակելը եւս աւելորդ չենք համարում (նախ մեր համարներն են՝ արաբանիշ թիւ եւ հայերէն գլխատառ, ապա՝ Միաբանիւն՝ արաբանիշ թիւ եւ լատինատառ պայմանանիշ): աբպէս՝ 2 Բ=9 E, 6 Զ=5 Z, 7 Է=4 T, 8 Ը=3 M, 11 Ի=1 K, 19 Ժ=8 N, 26 Պ=2 Ar, 23 Ծ=7 R, 25 Զ=ԼԲ2, 43 Yk=ԼԲ1, 44 Kw=10 S, 45 Kբ=6 Am:

<sup>7</sup> *The Epic Histories Attributed to Pawstos Buzand (Buzandaran patmutiunk)*, Translation and Commentary by Nina G. Garsoian, Cambridge, MA: Harvard University Press, 1989, էջ 601-2. Յեսազայ ձանձրալի կրկնութիւններից խուսափում ենք, պակասների խնդիրը թողնում, սպա՛ մեր շարքի կարգով առաջնորդուելով ու խմբաւորելով, նոյն շարքի պայմանանիշերով թուարկում ենք առաւել կարեւոր սխալմունքները. ա) 32 ձեռագրից 25ը համարուել են ամբողջական, 7ը՝ հատուածական (պահպանուած ամբողջական օրինակներն իրականում 18ն են), բ) ամբողջական են դարձուած Ն, Շ, Ձ, Ռ (Երեւանի 2748, 1862, 3965) հատուածական եւ Յ, Փ (Վենետիկի 1014, 512) ճառընտրային օրինակները, գ) ժ եւ ի (Վենետիկի 721, Երեւանի 3079) օրինակների գրչութեան 1700 եւ 1720-30ական թուականները դարձուել է 1720 եւ 1681, չ (Վենետիկի 2640) օրինակի 1783ը՝ 1743, Պ (ՄՄ 8813) օրինակի 1688ը՝ 1668, Լ (Վենետիկի 1188) ձեռագրի Մխիթարեան մատենադարան մուտք գործելու 1750 թուականը՝ 1761, դ) թերի ճ եւ Մ (Երեւանի 6321 եւ 6554) ձեռագրերը դարձուած են հատուածական, ե) մտացածին 673, 875 եւ 1706 համարներով նշանակուել Բ, Յ եւ Փ՝ Վենետիկի Ա, Բ, Գ ճառընտիրները, որոնց ցուցակի համարները 201, 202 եւ 203 են, իսկ գոյբահամարները՝ 17, 1014 եւ 512: Ի վերջոյ, ինչպէս արդէն ասել ենք, ձեռագրերը թուարկուած են ըստ հաւաքածուների, մինչդեռ, մեր համոզմամբ, որեւէ գործի կամ ժողովածուի ձեռագրերը ներկայացնելու բաւազորն եղանակը ժամանակագրական բնութագրական յատկանիշերով առաջնորդուելն է. նախ՝ խիստ պայմանական, աւելին՝ բնագրական խնդիրների համար չորրորդական նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ Բուզանդի այսինչ ձեռագիրը գտնուած է Երեւանում, այսինչը՝ Երուսաղէմում կամ մի այլ տեղ. վերջապէս, անիմաստ է ի սկզբանէ իսկ մէկ կամ մի քանի գլուխ պարունակող ձեռագիրը ամբողջական օրինակների շարքում ներկայացնելը:

<sup>8</sup> Պատկերն, անշուշտ, աւելի պարզ է դառնալու բարդատուութեան արդիւնքով ստացուած տարբերակների քննութիւնից յետոյ. այս պատճառով էլ ձեռագրերի ազգակցական կապի յտակման խնդիրն այստեղ դեռեւս չենք քննել:

<sup>9</sup> Սրանք նաեւ մեր համեմատութիւնների պայմանանիշերն են. ձեռագրերի ազգակցութիւնը, անշուշտ, նրանց ժամանակագրական կարգից խիստ տարբեր է, բայց ժամանակագրական-այբբէնական կարգին հետեւող պայմանանիշերի օգտակարութիւնն այն է, որ պայմանանիշ գրի՛ այբբութեան շարքում գրուած դիրքով հեշտ ենթադրելի է նոյն նիշով արտայայտուող ձեռագրի հնութեան աստիճանը:

<sup>10</sup> Ձեռագրերը թուարկել ենք հետեւեալ համառօտումներով. Եղմ՝ Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի Սրբոց Յակոբեանց վանքի մատենադարան, Երեւան՝ Երեւանի Մաշտոցեան Մատենադարան, Վենետիկ՝ Վենետիկի Մխիթարեան մատենադարան, Վիեննա՝ Վիեննայի Մխիթարեան մատենադարան:

<sup>11</sup> Յիշատակարանում (էջ 396-388) գրուած է. «եղև վաղճան եւ գրաւ տպեցման Պատմագրիս Հայոց յօգոստոսի Դ (4)»: Ըստ Քերովբէ Պատկանեանի հրատարակութեան՝ սրա տպագրութեան վաւրը Կ. Պոլիսն է. «առաջին տպագրութիւն մատենիս եղև ի Կ. Պոլիս ի թուիս ԹՃՀԹ, յամի Տեառն 1730» (էջ Ա): Միաբանն աւելի է մանրամասնել. «Տպագրութեան տեղը չէ նշանակուած այս հրատարա-

կուժեան մէջ, բայց տպարանի կամ «գործարանի» աշխատողների, հրատարակութեան ծախսը ստանձնողների անուններից եւ այլ նման հանգամանքներից հետեւում է, որ այս հրատարակութիւնն եղել է Կ. Պոլսում» (Գ. Տէր-Մկրտչեան, էջ 352): Գրքիս մանրամասն նկարագրութեան մէջ այն որակուած է այսպէս. «Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, տպ. Մարտիրոս Սարգսեանի, 1730, 396 էջ»։ տես Ն. Ինէլ Ա. Ոսկանեան, Քնարիկ Ա. Կորկոտեան, Անթառամ Մ. Սաւալեան, Հայ գիրքը 1512-1800 թուականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն, Առաջարան Ն. Ա. Ոսկանեանի, խմբագրութեամբ Ռաֆայէլ Ա. Իշխանեանի, Երեւան, 1988, էջ 295-300 հմմտ.՝ Vrej Nersessian, A Catalogue of Early Armenian Books 1512-1850, London: The British Library, 1980, p. 120, No. 471: Մատենագիտական գրականութեան մէջ այս հրատարակութեան թուականի վրիպակով լիշատակութիւններն արձանագրել է դեռեւս Միսրանը՝ տե՛ս Գ. Տէր-Մկրտչեան, էջ 252-3:

- <sup>12</sup> Որոշ նշանների հիման վրայ թույլ կասկած ունենք, թէ այս տպագրի հիմքը գուցէ եղել է մեր շարքի 8 լ՝ Երեւանի հմր. 1482 ձեռագիրը:
- <sup>13</sup> Փաւստոս Բուզանդ եւ իւր Պատմութիւն Հայոց, Քննաչք. Ինքնագրութիւնք Նորայրի, Պրակ Ա, Ստոքհոլմ, 15 Մայիս 1887, էջ 18:
- <sup>14</sup> Պորի առաջին տպագիրը Մխիթարեաններին յարնի էր. անգամ իրենց բաւազոյն ձեռագիր Փաւստոսի դիմաց տուել են «զտպեան» Բուզանդի (տես մեր շարքի Լ օրինակի թ. Բա), սակայն բաւարարուել են իրենց ունեցած հինգ օրինակով եւ այդ տպագիրը չեն գործածել:
- <sup>15</sup> Ենորհակալութեամբ արձանագրում ենք, որ մեզ հետաքրքրող այլ պատմագրքերի շարքում, այդ ձեռագրերը նկարագրել ենք Հ. Լիւոն Զեքիեանի հրահրով 1990ի Օգոստոսին Վենետիկի համալսարանի հայերէնի եւ հայագիտութեան ամառային դասընթացին դասախօսելու զուգընթաց, Մխիթարեան միաբանութեան ըրրոր անդամների ամէնասիրալիր օժանդակութեան շնորհիւ (ձեռագրերից միջանիւն ունէին միայն անկանոն էջակալում, ուստի արել ենք նրանց կանոնաւոր թերթակալումը): Այժմ նշանակում ենք նաեւ մեր հանգուցեալ բարեկամ Հ. Սահակ վ. Ճեմճեմեանի նորատիպ նկարագրութիւնները եւ նրանց նորովի. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենագրարանին Մխիթարեանց ի վենետիկ, Հատոր 2. Պատմագիրք Հայոց-Կանոնագիրք-Գրիգոր Նարեկացի-Ներսէս Ենորհայր-Ներսէս Լամբրոնացի-Արթագիրք, Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1996 (այսուհետեւ՝ Յուցակ Վենետիկի, 2):
- <sup>16</sup> Վենետիկի ձեռագրերի անառջնակարգ լինելը խոստովանել է նաեւ մխիթարեան երրորդ հրատարակութեան յաւելումների հեղինակը. «չունենով առ ձեռն յաւազոյն օրինակ առ ի յուղղել զվրիպակա՝ որովք լի են գրչագիրք վանացս, ամենեքին կարի նորք եւ աննշանք» (անդ, էջ 343):
- <sup>17</sup> Միմեանց նկատմամբ ձեռագրերի ոչ-էական, ո՛չ խմբագրական տարբերութիւններ ունենալու հանգամանքը միեւնոյն գաղափարից ծագած լինելով բացատրելը նոյնպէս կարող է հաստատուել կամ ժխտուել միայն ամբողջ նիւթի քննութիւնից լետով:

- <sup>18</sup> Մրա հաստատումն է թէկուզ միայն այն փաստը, որ Բուզանդարանի բնագրի վերջերս արուած երկու վերահրատարակութեան մէջ էլ նշուած է, թէ «Բնագիրը Ք. Պատկանեանինն է ա. Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Երեւանի համալսարանի հրատարակութիւն, Երեւան, 1987 (445 էջ. զուգադիր՝ Մալխասեանցի աշխարհաբար թարգմանութիւնը), ք. Ps. Pawstos, Buzandaran Patmutiunk [The Epic Histories], Classical Armenian Text Reprint Series, Gen. Ed. John G. Greppin (Delmar, N.Y. 1984) Գարտիանի անգլերէն առաջաբանով: Հասկանալի է, որ սրանք եւ թիֆլիսեան հրատարակութիւնը (Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, [հրատ.] Ք. Գարտեան, 1912, 407 էջ) այստեղ չենք ներկայացնելու, քանզի մեր խնդրի տեսակետից նրանք ունեն սոսկ մատենագիտական արժէք:
- <sup>19</sup> Առաջին հրատարակութեան ձեռագիրը յետագայ հրատարակութիւններէ մէջ հաշուի չի առնուել, ուստի հանրագումարի բերելիս նրա հանգամանքն անտեսելու սխալ չէ:
- <sup>20</sup> Տե՛ս՝ աստ՝ 7 է եւ մեր հրատարակած՝ Մերոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեան, Ժուցակ հայերէն ձեռագրաց Մկրտիչ Սանասարեանի, Վենետիկ-Ս. Ղազար, 1981, էջ 10 (առաջաբան) եւ 91-4 (նկարագրութիւն):
- <sup>21</sup> Էջմիածնի մատենադարան մուտք է արուել 1913-1915ի միջեւ, տե՛ս՝ Մատենադարանի ձեռագրական հաւաքածոները - Ժուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեցին Օ. Եղանեան, Ա. Զէլթունեան, Փ. Անթարեան, Շ. Ա., Երեւան, 1965, էջ 72-86 (այսուհետեւ՝ Ժուցակ ձեռագրաց ՄՄ, Շ. Ա. եւ Շ. Բ.՝ Երեւան, 1970):
- <sup>22</sup> Գուցէ Պոլսի տպագրիչն էր. բայց սա եւս կարող է պարզուել ընթերցումների քննութեամբ:
- <sup>23</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ հատոր երկրորդ, յօրինեց Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1924 (այսուհետեւ՝ Ժուցակ Վենետիկի, Բ.):
- <sup>24</sup> Առաջաբանի եւ բնագրի որոշ ուղղագրական ձեւեր հիմք են տալիս ենթադրելու, թէ այս հրատարակութեան «հոգացողն» էլ կարող էր լինել կրկին բազմապատակ Հ. Վարդան Հացունին:
- <sup>25</sup> Ձեռագիրն ստացել է Երուսաղէմի պարտքերը փակելու համար ժողովարարութեամբ շրջելու ժամանակ. տր էլ ի Սըսայ եւ եկն ի յԱրեւելս վասն Երուսաղէմայ, զի բազում պարտս անկեալ էր ի վերայ Սուրբ Երուսաղէմայ (էջ 715). հմմտ.՝ Բարզէն Ա. [Կիւլխէրեան] աթուակից կաթողիկոս, Պատմութիւն կաթողիկոսաց Կիւլխեր (1441էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, 1990, էջ 155-65. այս ձեռագրի լիշատակարանն օգտագործուած չէ, այլայլէս հեղինակը կարող էր աւելի վստահ թուագրել հանգանակութեան սկզբում Ամիդում կայացած ժողովը:
- <sup>26</sup> Մանրամասն տե՛ս՝ Մայր ցուցակ ձեռագրաց Մրտց Թակրեանց, կազմեց Նորայր Կայս. Պողարեան, Շ. Բ., Երուսաղէմ, 1967, էջ 230-2 (այսուհետեւ՝ Ժուցակ Երուսաղէմի, Բ.), լիշատակելու ենք նաեւ Ա՝ Երուսաղէմ, 1966, եւ Ե՝ Երուսաղէմ, 1971 հատորները): Այստեղ ներկայացուող ձեռագրերի այլ միւս պատմիչների երկերի առաջաբաններում արուած նկարագրութիւնները յղելու ենք միայն ըստ հարկի:

նրանց ճշգրիտ լիչատակութիւն-լրումներ անին անկատակաբարձար ենք համարում, քանզի ներկայ շարադրանքի բուն նպատակադրման առումով գործնական օգտակարութիւն չունեն Ձեռագրերի պարունակած այլ բնագրերը թուարկում ենք բանասիրական գրականութեան մէջ նրանց ունեցած առաւել գործածական եւ ճանաչուած համառօտ ձեւերով. ասենք՝ Վովսիւսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց» գրելու փոխարէն գրել ենք ուղղակի՝ «Խորենացի»:

- <sup>27</sup> Ունենք պատճէնը՝ ՄՄ, ժապաւէն հմր. 408: Մնացեալ ձեռագրերը նկարագրելու ենք հնարաւոր համառօտութեամբ եւ միօրինակութեամբ. մեր ընդունած նկարագրական կաղապարից չեղումները միշտ պայմանաւորուած են օգտագործուած նկարագրութիւնների անհետեւողականութեամբ: Մի քանի գէպքում, ասենք՝ երբ Փաւստոսի բնագիրը կրող թերթերի քանակը սովորականից քիչ է, նշանակել ենք նաեւ էջերի գրադաշտի չափերը:
- <sup>28</sup> Ձեռագրացուցակը (Յուցակ ձեռագրաց ՄՄ, Ա., էջ 661) գրչութեան վայրը հարցականով նշանակել է Կ. Պոլիս, որ սխալ է եւ հիմնուած լիչատակարանի՝ «եկին եսփուճիկ ի Կոստանդնուպօլսա, բերին Ամթալ փաշին Բ (2) կապա» (227 բ) յստակ հստուածի թիւրընկալման վրայ: Միաբանը (էջ 358) նոյն տողից ճիշդ եզրակացութեան է եկել: Յիշատակարանն ամբողջութեամբ տե՛ս նաեւ՝ Հայերէն ձեռագրերի ժ. գարի լիչատակարաններ, Հատոր Բ. (1621-1640թթ.), կազմեցին Վազգէն Յակոբեան եւ Աշոտ Յովհաննիսեան, Երեւան, 1978, էջ 51 (Ա. եւ Գ. հատորները՝ Երեւան, 1974, եւ 1984. այսուհետեւ՝ ԹԻՂ. ԺԿ., Ա., Բ. եւ Գ.) նաեւ՝ Արարատ, 1888. էջ 406:
- <sup>29</sup> Տե՛ս՝ ՄՄ հմր. 1518, Վենետիկի Միսիթարեան մատենադարանի հմր. 1245 եւ ընդ.
- <sup>30</sup> Այս փաստն արձանագրող Յակոբ երէցը թուարկել է նաեւ այդ եկեղեցու քահանաների անունները, արձանագրել Մովսէս Տաթևացի կաթողիկոսի աշակերտ Եսալի արքեպիսկոպոսի ձեռքով Երնջակի Ս. Կարապետ վանքի նորոգութիւնը եւ ընամբողջ լիչատակարանը տես ԹԻՂ. ԺԿ., Բ., էջ 699-700:
- <sup>31</sup> Ծուցակ Երուսաղէմի, Բ., էջ 155-9. հմմտ.՝ ՄՄ, ժապաւէն հմր. 1297:
- <sup>32</sup> Ծուցակ Երուսաղէմի, Բ., էջ 148-50. հմմտ.՝ ՄՄ, ժապաւէն հմր. 1296. նաեւ՝ ԹԻՂ. ԺԿ., Գ., էջ 363-4:
- <sup>33</sup> Ծուցակ Երուսաղէմի, Ե., էջ 319-22. նկարագրութիւնը դպրութիւնների եւ գլխացանկերի էջերը չունի. հմմտ.՝ ՄՄ, ժապաւէն հմր. 1299. նաեւ՝ ԹԻՂ. ԺԿ., Գ., էջ 343-5:
- <sup>34</sup> Գրուել է 1651-1661ին.. այստեղ նշանակել ենք Բուզանդարանի գրչութեան թուականը:
- <sup>35</sup> Գ. դպրութեան գլխացանկը դրել է Խոստարանութիւնից առաջ. գլխացանկերի, երբեմն՝ նաեւ շարադրանքի մէջ խորագրերը համառօտում է. ընդհանրապէս բաօրինակութիւն չէ:
- <sup>36</sup> Ձեռագրիս գրչութեան բոլոր լիչատակարանները տես՝ ԹԻՂ. ԺԿ., Գ., էջ 914-9:
- <sup>37</sup> Կարնոյ Սանասարեան վարժարանի համար կարապետ Եղեանի գնած այն ձեռագիրն է, որի համեմատութեամբ արուել է Բուզանդարանի Պատկանեան հրատարակութիւնը եւ որը եղել է Ասողիկի Պատմութեան Բ. տպագրի հիմնական օրինակը (Մալխասեանցը նկարագրել եւ մանրամասն ներկայացրել է ձեռագրիս

ընագրական լատկանիչերը: տե՛ս՝ *Ստեփաննոսի Տարոնեցու Ասողկան Պատմութիւն արեգեքական, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 16-18*: Միաբանը (Ա., էջ 335) սրա մասին գրել է. «մանրամասն տես Ասողկան Պատմութիւն, ՍՊ, 1885, լատաջարան Ս. Մայխասեանի... Այս ձեռագրից է, Մայխասեանի վկայութեամբ, Պատկանեանի Փաւստոսի հրատարակութիւնը՝ «Համեմատութեամբ այս օրինակի արար ուսուցչագետն Ք. Պատկանեանց զՏպագիրն իւր»։ Այդ ձեռագրի թուագրւած (1668թ.) եւ Պատկանեանի խոստովանութեամբ՝ իր համեմատածի անթուական լինելու հակասութիւնը Միաբանը հաշտեցնում է ենթադրելով, թէ Պատկանեանն ունեցել եւ համեմատել է սրանից արուած անթուական մի օրինակութիւն, քանզի «Մայխասեանի հաղորդած տեղեկութիւնը պէտք է համարել իբրեւ շատ լաւ աղբիւր, որովհետեւ այդ բանասէրը Պատկանեանի աշակերտն է եղել եւ» նոյն ձեռագրիւր «շատ լաւ ուսումնասիրել է»։ Ձեռագրի՝ էջմիածնի մատենադարանին անցնելու հանգամանքները տե՛ս՝ մեր հրատարակած՝ «Մեսրոպ Տէր-Մովսիսեանի նամակները կարապետ Եզեանին», *Հայաստանի ԳԱ Լրագրեր հասարակական գիտութիւններ*, 1977, թիւ 10, էջ 108, ծ. 7:

<sup>38</sup> Հմմտ.՝ *Սամուէլի քահանայի Անցուց շաւարձունք ի գրոց պատմագրաց, լատաջարանով, համեմատութեամբ, լաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքեիլեանի, Վաղարշարպատ, 1893, էջ 2-3.*

<sup>39</sup> Կարելուր լիշատակագրութիւններից մէկը. «Ո՛վ հայրք սուրբ քահանայքն, որ մատնեաց ի ձեռն Ղափան փաշին. ես փախտական եւ անճարակ տեղի նստեալ՝ գրեցի զայս տետրս. թիւն էր ՌձԻԷ (1678), փետրուարի ամսոյն ժՁ (16), օրն շաբաթ» (111ա. այս թերթը ժ. պրակի առաջինն է)։ Բուզանդարանի Ե. զպր. գլխացանկի վերջում. «Ձեղկելի Գրիգոր գրչակս լիչիս՝ եւ Աստուած ողորմի ասա՛ր»։

<sup>40</sup> Միաբան, Ա., էջ 270:

<sup>41</sup> Մնացեալ նիւթերի ենթադրելի գաղափար օրինակ ժամանակին համարել ենք Երուանի հմր. 1486 ձեռագրիւր. տե՛ս՝ Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեան, *Ժուցակ հայերէն ձեռագրաց Մկրտիչ Սանասարեանի, Վենետիկ, 1981, էջ 93.*

<sup>42</sup> Ձեռագրիւր գրուել է 1678-9ին., Բուզանդարանն աւարտել է ՌձԻԷ (1678թ.) Դեկտեմբերի 19ին (տե՛ս՝ էջ 382). Նորնացին՝ 1679ի Ապրիլի 29ին:

<sup>43</sup> Մրա մասին տե՛ս՝ Գ. Գալեմքեարեան, *Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու, Վիեննա, 1915, էջ 64-99.*

<sup>44</sup> *Ժուցակ Երուաղէմի, Ա., էջ 624-8* հմմտ.՝ ՄՄ, ժապաւէն հմր. 1295:

<sup>45</sup> Վենետիկի Միսիթարեան ձեռագրացուցակը կազմուած է նիւթի կարգով, ուստի եւ սովորական գոյքահամարներից բացի ունի նաեւ ցուցակի համարներ, որ մենք նշանակում ենք առաջինից յետոյ, երկուսի միջեւ դնելով թեք գիծ՝, այսինքն այս 721/915ի առաջինը գոյքահամարն է երկրորդը՝ ցուցակի համարը:

<sup>46</sup> Նոյն կարծիքին է նաեւ ձեռնեմեանը. «աւարտին կայ ՌձՆԹ=1700 թուականը. կը համարինք որ անկէ առաջ գրուած ըլլայ Ձեռագրիս առաջին մասը»՝ *Ժուցակ Վենետիկի, Զ., էջ 203. տե՛ս նաեւ՝ էջ 207-8.*

<sup>47</sup> *Ժուցակ ձեռագրաց ՄՄ, Ա., էջ 936.*

- <sup>48</sup> Մանրամասն ձեռագրագիտական քննութիւնը տե՛ս մեր «Պատմութիւն քաղաքին Յանույ՝ բանաբաղութեան հեղինակի եւ ժամանակի հարցի շուրջ», *Պատմա-բանասիրական Հանդէս*, 1985, թիւ 2, էջ 217-20:
- <sup>49</sup> Նոյն, էջ 217:
- <sup>50</sup> Գաղափար օրինակի յիշատակարանի ճշգրիտ պատճէնումը մեր իրականութեան համար անտոյրը չէ:
- <sup>51</sup> Միտրան, Ա., էջ 269. Հմմտ.՝ Ժապաւէն հմբ. 1308:
- <sup>52</sup> Գուցէ արժէր թուագրել ժԶ-ԺԷ դարերի սահմանագծով, սակայն անվարան «ԺԶ դարի» (*Յուցակ Վենետիկի*, Զ. էջ 82) համարելը մի փոքր աւելին է: Յիշատակագրութիւն՝ Բա. «Ջալա պատմիչս Բուզանդ երբր ի վանս մեր՝ որ ի Վենետիկ, ի կղզւոջ Սըբոյն Ղազարու վ. հ. Ղազարոս վարդապետն [Պաշտօտընան] ի Պաշ-վարովցի՝ լերկրէ իւրմէ, ի ձեռաց առն միոյ բարեպաշտի [Տէր Թակոբայ], գորոյ փոխանն տարաւ աստի առ նա զտպեան սորա՝ լամի Տեառն ՌՁԾ (1750), ի Սեպ. 10»: Նոյն Ղազար վ. տեղեկացնում է. «Յիշատակս այս եթող ինձ՝ Հայր Ղազարիս ի Տէր հանգուցեալն Տէր Թակոբն՝ քեռին իմ»: (Բա) կայ նաև աւելի վաղ յիշատակագրութիւն (1ա). «Ես՝ անարժան Յովանէս Ատոապատցի ||| Թվ. ՌՃԻԴ (1675) եկի կամոսիս (՞)»: Լա «Վարճընեցաւ Նաչիկ բացքերնի (՞) 1742, Փետր. 8ին, օրն հիկենշաբաթի ||| սադիմուէննն (՞) ձուրճովէ սըն (՞) մի գոլլէ ես՝ Լուկի Տէր Ակոբի, որ գարս գիրս գրեցի»: Վերջին յիշատակագրութիւնները չկան *Յուցակ Վենետիկի*, Զ., էջ 79-82:
- <sup>53</sup> Շարունակութիւնը՝ 184թ-187ա, ԺԸ., դ. սկզբներէ որեւէ տիրոջ ձեռքով, նորագրով եւ [վան արքայութեանն Ատոուծոյ] անունով խորագրելի, Բուզանդի երկի հետ կապ չունեցող մի անկարևոր քնագիր է. «ԺԸ. դարու գրչութեամբ բառիններէն թարգմանութիւն մըն է, ուր կը դրուատէ արքայութեան հոգևոր վայելքը՝ *Յուցակ Վենետիկի*, Զ., էջ 82: Նոյն տէր-յաւելողի ձեռքով լուսանցներում կան մեր պատմիչի երկի բովանդակութեանն արձագանգող՝ «Վարազդատ արքա մեռաւ» (163ա), «ԶՔարեղին մեծաւոր կախեցին» (163բ) եւ արտեսակ ալլ անարժէք արտասարտութիւններ. տե՛ս՝ ՄՄ, Ժապաւէն հմբ. 1310:
- <sup>54</sup> Յիշատակարանս, ուստի եւ՝ գրչի անունը ձեմճեմեանը չի նկատել տե՛ս՝ *Յուցակ Վենետիկի*, Զ., էջ 79-82:
- <sup>55</sup> 1755թ. Փետր. 4ին. Հալէպից, Ալիքսանդրիայի ճանապարհով, նաևով Սուրբ Ղազար է ուղարկել միաբանութեան անդամ Գէորգ վ. Պաղտասարեան Անթեպցի երկրորդը (ՊՏպ. Գբ.) Մինչ այդ ձեռագրիս տէրը եղել է Հալէպցի Մախաուտեանց Պետրոսը (նոյն տեղում). տե՛ս՝ ՄՄ, Ժապաւէն հմբ. 1309:
- <sup>56</sup> *Յուցակ Վենետիկի*, Զ., էջ 65: Նախորդ մասերի հետ Փաւստոսի հատուածը եւս համարել է ժԶ. դարի, բայց այդ թուագրումը որեւէ բանով չի արդարանում:
- <sup>57</sup> Յաջորդում է չգրած մի տող, իսկ նախորդող երեք թեք գծերի տեղերում թողնուած է մէկական անուն գրելու տեղ: Այսպիսով, յարմար է Յարութիւն դպիր գրելը եւ նրա Միքայէլ երէց ուսուցիչը, որոնք գուցէ փնտռելի են Ամիդում կամ Պոլսում:
- <sup>58</sup> *Յուցակ Վենետիկի*, Զ., էջ 213-4. Հմմտ.՝ ՄՄ, Ժապաւէն հմբ. 1311:
- <sup>59</sup> *Յուցակ Երուսաղէմի*, Բ., էջ 396-8. Հմմտ.՝ ՄՄ, Ժապաւէն հմբ. 1298:

- <sup>60</sup> Ըստ ամենայնի՝ նման է նախադասութիւնները համարակարգելու, որ արուել է գուցէ ինչ ինչ ցանկեր կազմելու համար:
- <sup>61</sup> *Թուցակ վիճակի*, Զ., էջ 231-2. Հմմտ.՝ ՄՄ, ժապաւէն հմր. 1312:
- <sup>62</sup> *Թուցակ Հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի վիճակ, հ. Բ.*, կազմեց Հ. Համազասպ վ. Ոսկեան, Վիճակ, 1963, էջ 397-8 (այսուհետեւ՝ *Թուցակ վիճակի, Բ.*, Ա. հատորը՝ կազմեց Հ. Եակովբոս Տաշեան, Վիճակ, 1895՝ *Թուցակ վիճակի, Ա.*) ապա ներկայացնում է համեմատողի միջանդի դիտողութիւն. Հմմտ.՝ ՄՄ, ժապաւէն հմր. 1260 (1989ի Օգոստոսին շտրհակալութեամբ ստացել ենք Հ. Օգոստինոս Սեքուլեանից):
- <sup>63</sup> *Թուցակ վիճակի, Ա.*, էջ 617-9; Թ. Թունեանը եւ Հ. Ներսէս վ. Ալիսեանն իրենց հրատարակութիւնների մէջ ժամանակին դործածել են այս օրինակի որոշ արժէքաւոր բնթերցուածներ:
- <sup>64</sup> *Թուցակ վիճակի, Բ.*, էջ 306-7:
- <sup>65</sup> Եղել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի հմր. 30՝ Բուզանդարան պարունակող միակ ձեռագիրը. նկարագրութիւնը տե՛ս՝ Ս. Կանախանց, *Թուցակ Հայերէն ձեռագրերի Թիֆլիսի Ներսիսեան հոգեւոր դպրոցի, Թիֆլիս*, 1893, էջ 54-6. Հմմտ.՝ Օ. Եզանեան, *Ներսիսեան դպրոցի Հայերէն ձեռագրերի հաւաքածուն*, *Հայաստանի ԳԱ Լրագրեր հասարակական գիտութիւնների*, 1969, թիւ 6, էջ 83-4:
- <sup>66</sup> Մեծ ձեռագրի մնացորդ է. կազմել է նրա ԻԹ.-ԼԳ. պրակները (առաջինից պակասում է 2, վերջինից՝ 6 թերթ, միւս երեքը լրիւ են՝ 12ական թերթով): Մասնատւելուց առաջ թերթակարած է եղել տասնեակներով. համարների առաջին թիւը նախապէս եղել է 2, ապա դարձել է 3. պահպանուածն ամբողջի 337-385րդ կամ 237-285րդ թերթերն են: 1978թ. առաջ սրտ հետ միասին կազմուած էր նաեւ նոյն ձեռքով՝ նոյնպէս տասնեակներով համարակարած՝ ԺԼ նիշն ունեցող, 12-թերթանոց մի պրակ. պարզելով, որ դա մասն է Թաւրիզի Արամեան գրադարանից ժառանգուած Երեւանի հմր. 4347 ձեռագրի (Գաւազանգիրք Մարտինոսի Օպաւացու), այդ պրակը միացրինք վերջինիս, որով այն ամբողջացաւ՝ Աճառեանի (*Թուցակ Թաւրիզի*, հմր. 17) տեսած 212 փոխարէն ունեցաւ 224 թերթ). այսինքն՝ անշատուած էր եղել նրա նկարագրելուց՝ 1905-6 թթ. առաջ՝ Տէր-Մովսիսեանը (*Ընդհանուր ցուցակ Հայերէն ձեռագրաց, Մատենադիրներ, Բ. օրինակ, թղթ. Ա.* էջ 305՝ - ՄՄ, Անտիպ ձեռագրացուցակների հաւաքածու, հմր. 133) ար 6554ը նկարագրել է իբրեւ «էջմիածնի ն.հ. 1185» եւ բացատրել «Նուէր Գալուստ Տէր-Մկրտչեանից»: Եզանեանը (*Թուցակ ձեռագրաց ՄՄ, Ա.*, էջ 155, եւ *Ներսիսեան դպրոցի Հայերէն ձեռագրերի հաւաքածուն*, *Հայաստանի ԳԱ Լրագրեր հասարակական գիտութիւնների*, 1969, թիւ 6, էջ 84) նոյնպէս սա ներկայացրել է Միաբանից ստացուած ձեռագրերի շարքում եւ աւելացրել «Հմր. 6554 ձեռագիրը եղել է Ներսիսեան դպրոցի սեփականութիւնը»: ցուցակի մի այլ էջում (155) սա թուարկում է Երեւանի Գրական թանգարանից Մատենադարանին անցած ձեռագրերի մէջ եւ երկու այլ միաւորի հետ միասին համարում Կանախանցի ցուցակագրութիւնից (1893) յետոյ Ներսիսեան դպրոցում աւելացած ձեռագիր: Ներսիսեան դպրոցին պատկանած եւ Գրական թանգարանից Մատենադարան եկած լինելը խիստ կասկածելի է. թէեւ Թաւրիզի ձեռագրերի նկարագ-

րութիւնների մէջ Բուզանդարանի այս թերի օրինակը լիշատակուած չէ, բայց տարբեր ձեւերի մաս կազմած 50 եւ 12 թերթանոց հատուածների միակազմ լինելը եւ նոյն ձեւով ու նոյն եղանակով (տասնեակներով) համարակալուած լինելը մտածել է տալիս, որ Բուզանդարանի հատուածը եւս ծագում է թաւրիզից եւ եկել ու էջմիածին է հասել 1905-6 թթ. առաջ, գուցէ Ս. Տէր-Յակոբեանի ձեռքով (տե՛ս՝ շարքիս Պ ձեռագրի նկարագրութիւնը):

<sup>67</sup> Մանրամասն տե՛ս՝ *Յուցակ վիճենայի*, Բ., էջ 533-4 թուագրել է «ԺԼ-ԺԹ. դդ.», գրչութիւնը համարել՝ շղագիր, սակայն վերջինս կոչելի է ճտորանման շղագիր, որի հիման վրայ էլ երկղարեալ ընդարձակ թուագրումը որոշակիացնում ենք՝ ԺԼ. դ., տե՛ս՝ ՄՄ, դ. Ժ. 1323:

<sup>68</sup> Աւանդովթի պատկերման խնդրի իմաստով աւելի տրամաբանական պէտք է լինէր թերի՝ ոչ-ամբողջապէս պահպանուածներից լետոյ, եւ ճառընտրալին ու լայնաւուրային օրինակներից առաջ, կորսուած ձեռագրերը ներկայացնելը, սակայն աղբիւրի ձեռագրական ժառանգութեան առկա կացութիւնը լատակ ներկայացնելու կարիքը թելադրում է հակառակ դասաւորութիւն: Մի այլ՝ անպատասխան մնացող հարց է, թէ ինչու՞ այսպիսի հատուածական օրինակներ կան միայն Երեւանում, քանզի արդպիսիք հաստատապէս չկան Երուսաղէմում եւ վիճենայում, իսկ վենետիկի Միսիթարեան մատենադարանում գուցէ կա՞ն:

<sup>69</sup> Յիշատակարանները տե՛ս՝ *Յիշ. Ժ. Դ.*, Բ., էջ 139-40: Ձեռագիրն ունի նաեւ այլ պատմիչների երկերի նախաբաններ:

<sup>70</sup> *Յիշ. Ժ. Դ.*, Գ., էջ 13:

<sup>71</sup> *Յուցակ ձեռագրաց ՄՄ*, Բ., էջ 445-6: Ներսէսի վարքը մնացել է աննկատ, ըստ արդմ եւ՝ չի արձանագրուել Յիշատակարանները. տե՛ս՝ *Յիշ. Ժ. Դ.*, էջ 587-8:

<sup>72</sup> Ձեռագիրս պատկանել է Պաշիկ վ. Դադեանին. մանրամասն նկարագրութիւնը տե՛ս՝ Յակոբ Թօփեան, *Յուցակ ձեռագրաց Դադեան Պաշիկ վարդապետի*, ժողոված 1878-1898, Մասն Ա, Վարդաշապատ, 1898, էջ 94-5, հմր. 78: 1624ի լիշատակարանը տե՛ս՝ *Յիշ. Ժ. Դ.*, Բ., էջ 131:

<sup>73</sup> Արժեան 6714ի 13-33 թերթերը 1713թ. Նոր Զուղայում լրացրել է Եսայի Հասան-Ջալալեան կաթողիկոսը (տե՛ս՝ լիշ. 33բ)՝ այս տեղեկութիւնն էլ դարձել է ձեռագրի՝ 1713ով թուագրելու միակ հիմքը (*Յուցակ ձեռագրաց ՄՄ*, Բ., էջ 378): 6714ի մասի գիրը տարբեր է նախորդ երկուսի գրից, բայց 1713ից առաջ սա եւս նրանց հետ միատեղ եղել է նոյն կազմի մէջ, այսինքն՝ թուագրելի է 1688-1713 միջակայքով:

<sup>74</sup> Ձեռագրի երեք մասերից որեւէ մէկում գրչութեան վայրը լիշատակուած չէ, սակայն 4351ի (նկարագրութիւնը տե՛ս՝ Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ ԽԴ) վրայ մնացած՝ անպարման Նոր Զուղայում պատրաստուած կաշեկազմի Ա փեղկին շուրջանակի դրոշմուած է երկաթագիր հետեւեալ արձանագրութիւնը. «Յիշատակ է պարոն Մնացականին եւ ծնողաց իւրոյ Գրբիգորին եւ մօրն թագուհէ. թուին ՌՃԼԷ (1688)»:

<sup>75</sup> Մեր նիւթից թուացեալ շեղումով, հնարաւոր համառոտութեամբ պարզենք ձեռագրի մասնատուած-եռապատկուած լինելու հանգամանքները. Նախապէս այն

պատկանել է Քաւրիցի Արամեան գրադարանին, որի ձեռագրերն առաջին անգամ նկարագրել է Ս. Հայկունին (*Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ*, մասն Ա., էջ-միածին, 1894, էջ 369-384. այս ձեռագիրը չի լիշատակել)։ Երկրորդը եղել է Դադեանը, որի ձեռագրերի ցուցակի Բ մասի «Յուցակ ձեռագրաց այլ եւ այլ տեղեաց» խորագրով լուսնւածում առկայ 153 նկարագրութիւններից 47-66 համարները կրող 19 միաւորն Արամեան գրադարանինն են. սրանցից մէկն է. «Թիւ 63 նտորգիր ժողովածու. Պատմութիւնք Մովսիսի Խորենացու, Եղիշէի, Փաւստոսի եւ Վարդանայ Բարձրբերդցու. Թուական ՌՃՂէ, նորոգուած Եսայի կաթողիկոսի ձեռքով, ՌՃԿԲին Ասպահան-Ջուղայում» (տե՛ս՝ Քօփեճեան, *Յուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի*, մասն Բ., 1878-1898, Վաղարշապատ, 1900, էջ 50-1)։ Քաւրիցի ձեռագրերը նկարագրող «Երրորդն է Սենեքերիմ Տէր-Թակոբեան ուսուցիչ, աթմ ուսանող Գերմանիոյ մէջ, որ աչքէ անցուցած է Քաւրիցի ձեռագիրներէն շատերը, ոմանց իջահամարները գրած, բայց իր աշխատութեան արդիւնքը հրատարակած չէ» (*Յուցակ հայերէն ձեռագրաց Քաւրիցի, կազմեց Հ. Յ. Աճառեան, Վիեննա*, 1910, էջ ԴԻ)։ Ըստ այսմ՝ ձեռագրերը թերթակաւրի է Ս. Տէր-Թակոբեանը. իրապէս՝ աթմ 4351ը եւ 8813ն ունեն տասնեակներով արուած եւ միմեանց չարունակող թերթահամարներ, որոնց համաձայն առաջինի վերջին թերթը 184 էր, երկրորդի առաջինը՝ 185 (6714ն այս թերթակարման հետքերը չունի)՝ Այստեմնեանիւ, չորրորդ ցուցակագրող Աճառեանը 1905-6ի 22րդ համարի ներքոյ նկարագրելով ձեռագրի այն մասը, որ այսօր Երեւանի 4351ն է (նոյն տեղում, էջ 20), քաղում է Դադեանի լիշեալ «Նմր. 63»ի նկարագրութիւնը եւ ասում. «Չկայ այժմ» (նոյն տեղում, էջ Իէ)։ Իսկ մինչ այդ Միաբանն ասում է, թէ այն «իր ձեռքը եղած գրչագիր ցուցակում (երեւի Տէր-Թակոբեանի կազմածն էր - Գ. Տ-Վ.) No 16» է, իսկ «Խաչիկ վարդապետի հաւաքած ձեռագրերի ցուցակում No 63», ապա վերջացնում է. «Անձամբ Ձն տեսած չեմ» (*Միաբան, Ա.*, էջ 354)։ 4351ը Արամեան գրադարանի մնացեալ ձեռագրերի հետ միասին, կարապետ եպս. Տէր-Մկրտչեանի ջանքերով, էջմիածին է եկել 1913ի Ապրիլին (*Յուցակ ձեռագրաց ՄՄ, Ա.*, էջ 88), 6714ը՝ 1920 թ. հաւաքածուի շարքում Մատենադարան է մտել Դադեանի պետականացուած 101 միաւոր ձեռագրի հետ (նոյն տեղում, էջ 114), իսկ 8813ը՝ «1937-1940 թթ. հաւաքածուի հետ՝ Գալուստ Տէր Մկրտչեանի անունով (նոյն տեղում, էջ 147), որ հաստատում է նաեւ ձեռագրի վրայի մակագրութիւնը. «Դպիր Գալուստի գրքերից» (8813, 1ա)։ Հաւանականն այն է, որ գործին վարժ առաջին մասնատող Դադեանն անջատել է 6714ի մասը (Տէր-Թակոբեանը այս հատուածը չի տեսել եւ չի թերթակաւրի), իսկ Բուզանդարանի մասն անջատել եւ այդ աղբիւրով գրադրող Միաբանին է լանձնել Տէր-Թակոբեանը (այս մասն էլ չի տեսել յաջորդ նկարագրող Աճառեանը, որն արդէն առաջին կէտով չի կարողացել ճանաչել Դադեանի նկարագրած ձեռագիրը)։ Անկասկած, առաջին իսկ պատեհ առիթով արհեստականորէն երեք ձեռագիր դարձած այս մասերը պէտք է միացուեն իրար եւ քերուեն սկզբնական տեսքի։

<sup>76</sup> Պատկանել է բանաստեղծ Յովհաննէս Թումանեանին (166ա)։

<sup>77</sup> *Յուցակ ձեռագրաց ՄՄ, Բ.*, էջ 725։

- <sup>78</sup> Վրէժ Ներսիսեան, «Յուցակ հայերէն ձեռագրաց Լոնդոնի Վեյքոմ ինստիտուտի գրադարանի», *Բանբեր Մատենադարանի*, հտ. 15, Երևան, 1986, էջ 324-5:
- <sup>79</sup> Կազմն անպայման Նոր Զուղայի դպրոցի գործ է, Ա. փեղկին շուրջանակի դրոշմուած է գրչութեան ժամանակի՝ 1700թ. երկաթագիր արձանագրութիւն:
- <sup>80</sup> Թուում է սա ժամանակի Նահապետ Ա. Եղեասցի կաթողիկոսի (1691-1705) նկատմամբ ստացողի (նրա ապագայ հետեւորդի) վերաբերմունքի արտայայտութիւնն է:
- <sup>81</sup> Գրչութեան վաւրը կրկին մակաբերում ենք Նոր Զուղայի դպրոցին յատուկ կազմից, որի Ա. փեղկին շուրջանակի դրոշմուած երկաթագիր արձանագրութիւնն է. «Յիշատակ է Աղսէքսանդր վարդապետին. թվին ՌՃԲ (1703)»:
- <sup>82</sup> Օ. Եղանեան, «Աւետիք եւ Համբարձում Էնֆիանեան գրավաճառ եղբայրների ձեռագրական հաւաքածուն», *էջմիածին*, 1968, թիւ է., էջ 51-59; Արդեօք նո՞յնը չէ ինչ Միաբանի յիշատակածն է. «Լսած եմ, որ Թիֆլիս պ. Էնֆիանեանցների մատենադարանում կայ մի ձեռագիր Փաւստոս, սակայն այս լուրը ստուգութեան կարօտ է» (Միաբան, Ա., էջ 360):
- <sup>83</sup> Այս բաժնի ձեռագրերի նկարագրութիւնները նախորդների նկատմամբ դրսեւորւած հետեւողականութեամբ ու հարցակարգով աննշան անիմաստ էր, քանզի սրանց աւանդույթի հարցերն սուելի բարդ են եւ մեր նիւթից շեղուելով, վերաբերում են առաջին հերթին ճառընտիր ժողովածուին:
- <sup>84</sup> Պարուատ Տէր-Մկրտչեան, «Աղաթանգեղոսի աղբիւրներից. Յիշատակ դատակնքաց Գորիս եւ Շմոնի վկայից որք վկայեցին լուսհայ», Միաբան, Ա., էջ 298-339, լատկապէս՝ էջ 324:
- <sup>85</sup> «Յովհաննավանքի- [Մարտիրոզ] - ճառընտիր ձեռագրի մասին», *Պատմա-բանասիրական Հանդէս*, 1986, թիւ 4, էջ 173-81:
- <sup>86</sup> Միաբան, Ա., էջ 325:
- <sup>87</sup> Նոյն, էջ 360-3:
- <sup>88</sup> Նոյն, էջ 320, 324:
- <sup>89</sup> Վերնագրերն ու սկզբնատողերը քաղել ենք Վ օրինակից. Տի տարբերութիւններն աննշան են:
- <sup>90</sup> Frédéric Macler, *Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale*, Paris, 1908, հին հմր. 88, էջ 98: Նոր՝ մանրամասն ցուցակում այս նիւթը մնացել է աննկատ. տե՛ս՝ Raymond H. Kévorkian, Armén Ter-Stepanian: avec le concours de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian, *Manuscrits arméniens de la Bibliothèque Nationale du France*. Catalogue, Paris: Bibliothèque Nationale du France/Fondation Calouste Gulbenkian, 1998, col. 592: Մերոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեանն այս ձեռագիրը համարում է ժԱ. դարի. հմտ.՝ նրա՝ *Լեզհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց*, ճառընտիր, էջ 10, (ՄՄ, Անտիպ ձեռագրացուցակների հաւաքածու, հմր. 133), ուր նաեւ նկատուած է. «Մրանից են արտագրուած Վենետիկի ժԱ, ԼԲ եւ ԼԳ ճառընտիրները. ունի հին գլխակարգութիւն, որից պահպանուած է է-ձԿՁ համարը»:
- <sup>91</sup> Ձեռագիրը Պոլսի վրայով եւ Վրթանէս վ. Ասկերեանի ձեռքով 1754ին Տրապիզոնից Վենետիկ է ուղարկել Տէր Եակոբ Խոտորչրեցին:

- <sup>92</sup> *Յուզակ վենետիկի*, Բ., էջ 9, վենետիկի Գ. եւ Դ. տպագիրների լաւելուածի մէջ (էջ 278-87) նշանակուած են ցուցակային այս քաղուածքից տարբեր ընթերցումներ: Յուցակում նշանակուած են նիւթերի ո՛չ միայն թերթերի, այլեւ՝ սիւնակների համարները, որոնք այստեղ նոյնութեամբ բերուած ենք:
- <sup>93</sup> Ջեռագիրը Ս. Ղազարին է նուիրել Մերութնի առաջնորդ Մարգար եպիսկոպոսը: 1753ին վանք է հասցրել Մխիթարեան միաբան Գէորդ վ. Անթեպցի երկրորդը:
- <sup>94</sup> Վերջինս վենետիկեան տպագիրների մէջ լիշատակուած է:
- <sup>95</sup> *Յուցակ վենետիկի*, Բ., էջ 47:
- <sup>96</sup> *Յուցակ վենետիկի*, Բ., էջ 39. Բ. Սարգիսեանը ծանօթագրել է. «Առաջին մասը Փ. Բուզանդ. իսկ վերջինը Մերութն երէցէն է: Տպ. Սոփերք հայկ. հա. Զ. եր. 87»:
- <sup>97</sup> Ջեռագիրը Ս. Ղազար է հասել 1791ից առաջ:
- <sup>98</sup> *Յուցակ վենետիկի*, Բ., էջ 153:
- <sup>99</sup> Լրացուած-նորոգուած 1655ին:
- <sup>100</sup> *Յուցակ Երուսաղէմի*, Ա. էջ 303: Շարքիս մէջ չենք առել նոյն՝ Երուսաղէմի հմր. 1 ձեռագրի (Ճառընտիր, Երուսաղէմ, 1417թ.) մի նիւթը (էջ 693-6), որ Ներսէս Պարթեւի, Խաչ եպիսկոպոսի եւ Շաղխտա ու Եպիփան ճգնաւորների վարքերի միահիւսուածն է՝ ըստ Խորենացու եւ Փաւստոսի. տե՛ս՝ *Յուցակ Երուսաղէմի*, Ա., էջ 16:
- <sup>101</sup> Ջեռագիրը Վրթանէս վ. Ասկերեանը 1751ին Հռոմում գնել է թոքաթեցի մէկից:
- <sup>102</sup> *Յուցակ վենետիկի*, Բ., էջ 112:
- <sup>103</sup> Այս բաժնի ձեռագրերը նշանակուած ենք լատինատառ Y (=Յայրմաւուրք) գրով եւ հայերէն փոքրատառ ենթանիշերով:
- <sup>104</sup> *Յուցակ վիննայի*, Ա., էջ 36:
- <sup>105</sup> Rev. Sukias Baronian and F.C. Conybeare, *Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleyan Library*, Oxford, 1918, p. 52:
- <sup>106</sup> *Յուցակ վենետիկի*, Ա., էջ 74:
- <sup>107</sup> Նոյն տեղում, էջ 415: Այս եւ յաջորդ՝ 43րդ ձեռագրերն ըստ հութեան Յայրմաւուրք չեն, սակայն, Ջուրիթայ վարքը պարունակելու պատճառով, սրանք պայմանականօրէն դնում ենք յայրմաւուրային հատուածներ ունեցողների շարքում:
- <sup>108</sup> *Յուցակ վենետիկի*, Ա., էջ 337:
- <sup>109</sup> Թէ՛ Ճառընտրային եւ Թէ՛ Յայրմաւուրային օրինակների քանակը կարելի է բազմապատկել. եւ քանզի բաւական շատ են բերուած նմուշներին նման օրինակները, որոնք իրենց ժողովածուների մաս եւ նրանց աւանդութի կրող լինելով, մի տեղ դուրս են գալիս Փաւստոսի բնագրի շրջանակներից, մենք բոլորն այստեղ նշանակելու խնդիր չունենք:
- <sup>110</sup> Այս բաժինը բնորոշում ենք լատինատառ K (=կորուսեալ) գրով եւ թուարկում հայերէն փոքրատառ են թուահամարներով:
- <sup>111</sup> Ընդարձակ՝ երկու դարով արուած թուագրումը վիճարկելու կամ այդ խնդիրը քննելու միակ հնարաւորութիւնը գրչի եւ ստացողի անուններով այլ պահանջուած ձեռագրեր գտնելն է:
- <sup>112</sup> Սրանից է օրինակուած վիննայի հմր. 762՝ մեր շարքի 2 ձեռագիրը Արծնեան վարժարանի ձեռագրերը կորսուած են: Նվարագրութիւնը տե՛ս՝ 2. Յակոբ Ե. վ.

- Քոսեան, «Յուշակ հայերէն ձեռագրաց Արծնեան վարժարանի ի կարին», *Հանդէս Ամսօրեայ*, 1962, էջ 345-8:
- <sup>113</sup> Սրա ընդօրինակութեան վիճենայի 762 (Ղ) ձեռագրի լուսանցներում իբրև գաղափար օրինակի թերթահամարներ նշանակուած են Լաից սկսած մինչև 146թ թերթահամարները:
- <sup>114</sup> Ձեռագիրը պոկուած թերթեր շատ է ունեցել. տե՛ս Քոսեան, էջ 345: 1910-11ին երբ Ք. վ. Յովնանեանն օրինակել է այն, պահպանուած է եղել այսչափ (*Յուշակ վիճենայի*, Բ., էջ 306-7), իսկ Քոսեանի նկարագրութեան ժամանակ՝ 1912ի Ապրիլին արդէն կար Ջ. դպրութեան ը. գլխի միայն խորագիրը. տե՛ս էջ 347. այսինքն՝ դոնէ մէկ թերթ ընկել էր: Պատարանութիւնից բացի, նկարագրողն ընդարձակ քաղուած քներով ներկայացրել է Ե (285ա) եւ Ջ (328ա) դպրութիւնների սկսուած քները:
- <sup>115</sup> Ձեռագիրս կորուած կամ ոչնչացած է. մանրամասն տե՛ս՝ Յակոբ Թօփճեան, *Յուշակ ձեռագրաց Արմաշի վանքին*, Վենետիկ, 1962, էջ 5-7 (ստաջարան) եւ 104-8: Սկզբում (3ա) կար 1758ի իշատակագրութիւն, որը տե՛ս նաեւ՝ *Յուշակ վիճենայի*, Բ., էջ 3978:
- <sup>116</sup> Ք. վ. Սրուանձտեանց, *Թորոս աղբար*, մասն Բ., Կ. Պոլիս, 1884, էջ 454:
- <sup>117</sup> Ալիփուղար (=Ալիի աղբիւր) գիւղն Ամիղի մերձակայքում էր:
- <sup>118</sup> Հ. Ներսէս Աղինեան, «Բարսեղ վ. Արծրունի. եպիսկոպոս Ամիթի եւ վերատեսուչ Մուշի առաքելոց վանքի», *Հանդէս Ամսօրեայ*, 1956, էջ 425-51: Ամիթի դպրատունը թուարկել է 23 գրիչ եւ 60 ձեռագիր: Բայց անկախ այն հանգամանքից, որ այսօր մեր ունեցած նիւթը սրանից միջանի անգամ աւելին է, Ամիղի դպրոցի ժէ. դարի պատմութեան մանրակրկիտ հետազոտումը պէտք է անպարման դառնայ այդ ժամանակաշրջանի մեր իրականութեան շատ երեւոյթների ըմբռնման բանալին. տե՛ս նաեւ՝ Արշակ Ալթոյանեան, «Ամիթը՝ մեր մշակոյթի պատմութեան մէջ», *Հասկ*, 1947, թիւ 1-2, էջ 14-18:
- <sup>119</sup> Հմմտ.՝ Վահան Փափագեան, *Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում*, ԺԶ.-ԺԷ. դդ., Երևան, 1990, էջ 106-7:
- <sup>120</sup> Միսբան, Ա., էջ 359:
- <sup>121</sup> Վ. Գէորգեան, «Փառաոս Բուզանդի 'Հայոց պատմութեան' բնագրի հարցի շուրջը», *Գիտական Տեղեկագիր* Կ. 85, պրակ 3, Երևան, 1963, էջ 33:

THE PUBLISHED VERSIONS AND MANUSCRIPTS OF  
PAVSTOS BUZAND'S  
*HISTORY OF THE ARMENIANS*  
(Summary)

GEVORG TER-VARDANIAN

The author stresses that it is high time to prepare the critical text of the fifth century Armenian author P'avstos Buzand's *History of the Armenians*. For this purpose he has grouped all the relevant material under the separate headings of manuscripts or printed versions, and categorized the manuscripts as 'complete', 'incomplete', 'partial' or 'lost'.

The author mentions six publications of Buzand's *History*, the first from 1733. He also lists 18 complete and three incomplete manuscript copies, nine partial versions found in different collections of homilies, five partial versions found in different books of Menology, as well as three lost manuscript copies.

The author describes each of these manuscript copies in detail, describes their content and draws some conclusions about their quality, and the time and place they were copied. He asserts that a number of textual corrections suggested by different philologists are confirmed by certain existing manuscript copies of Buzand's work. Accordingly, he concludes that any textual correction should not be made in the *History* until the preparation of its critical text.